Azg Ազգ

31 ՄԱՐՏ 2012 ՇԱԲԱԹ 58(4910)

ISSN: 1829-1651

ՀԱԿ-ը եւ Տեր-Պետրոսյանը բացեցին քարոզահանրահավաքային շրջանը

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀԱԿ-ի երեկվա հանրահավաքը փաստորեն այս քաղաքական ուժի՝ ընտրությունների քարոզարշավին տրված մեկնարկն էր, թեեւ պաշտոնական քարոզարշավը սկսվում է ապրիլի 8-ին: Ընդհանրապես այս անգամ բոլոր քաղաքական ուժերը մի տեսակ շաս շուտ են սկսել քարոզչությունը, որոնք տարբեր դրսեւորումներ ունեն: Հանրահավաքի բանախոսները փորձեցին մարտական տրամադրություն փոխանցել իրենց համակիրներին: **Նիկոլ Փաշինյանը** թվեց ՀՀԿ-ի կողմից պատգամավորության թեկնածու առաջադրված մականունավոր գործարարների անունները, իսկ Հայաստանի նախկին ու ներկա նախագահներին էլ հղում արեց. «Ռոբերտ Քոչարյան եւ Սերժ Սարգսյան, դուք մեր արյունը չեք մարսելու, դուք խեղդվելու եք մեր արյան մեջ»: «Հանրապետության» **Արամ Սարգսյանը** խոսեց ՀԱԿ-ի եւ նրա համախոհների երազանքից՝ «քաղաքական մեր դասավորությունը բերելու», որի համար տեւական պայքար ու համբերություն է պետք լինելու:

Արամ Մանուկյանը ՕԵԿ-ի բաժանած ջեմից ու օծանելիքից

մի-մի օրինակ ուներ՝ ցույց տվեց (արդյո՞ք հենց ՕԵԿ-ի բաժանածն է, թե սիմվոլիկ ջեմ ու սիմվոլիկ օծանելիք՝ սեփական պահուստներից, չիմացանք):

Բայց իհարկե, ամենից կարեւորը **Տեր-Պետրոսյանի** ներկայացրած ՀԱԿ-ի դաշինքի նախընտրական ծրագրի հիմնադրույթներն էին, որոնք իր խոսքով համաձայնեցված էին դաշինքի անդամ կուսակցությունների հետ: Թեեւ նշեց միաժամանակ, թե ՀԱԿ-ը Հայաստանի միակ քաղաքական ուժն է, որ հատուկ ծրագրով հանդես գալու կարիք չունի՝ 4 տարի իշխանության իրական հակակշիռ է ներկայացել հասարակությանը ու հաջողությամբ լուծել է «ավազակապետական վարչախմբի արատների ու հանցավորության լիակատար բացահայտման եւ սահմանադրական կարգի վերականգնման, երկրի սոցիալ-տնտեսական զարգացմանն ուղղված այլընտրանքի առաջադրման» խնդիրներն այդ 4 տարում:

Տես էջ 2

Ֆրանսիան մանդատն ուրիշին փոխանցելու հարց չի բերել օրակարգ

Ղարաբաղյան հակամարտության կարգավորման բանակցությունները որոշակի դադարի վիճակում են հայտնվել նախընտրական շրջանի հերթագայության պատճառով, սակայն խոսակցություններն ու քննարկումները թեման արդիական են պահում՝ անկախ հակամարտության կարգավորման տարածաշրջանային կարեւորությունից: Հերթական անգամ ղարաբաղյան խնդրին արդեն ժնեւյան հանդիպմանը անդրադարձել են Ռուսաստանի փոխարտգործնախարար Գրիգորի Կարասինն ու ԱՄՆ պետքարտուղարի տեղակալ Ֆիլիպ Գորդոնը:

Մարտի 28-ին տեղի ունեցած հանդիպմանը կողմերը քննարկել են Ռուսաստանի ու ԱՄՆ-ի հարաբերություններն ԱՊՀ երկրների հետ, ինչպես նաեւ մտքեր փոխանակել հարավկովկասյան հակամարտությունների եւ մերձդնեստրյան հիմնահարցի առնչությամբ:

Մինչ Կարասինի քննարկումները հերթական ճեպազրույցներից մեկում ՌԴ ԱԳՆ պաշտոնական ներկայացուցիչ Ալեքսանդր Լուկաշեւիչը ԵԱՀԿ Մինսկի խմբում համանախագահող Ֆրանսիայի հնարավոր փոփոխության առնչությամբ հարցին արձագանքել է հաստատմամբ, որ Մինսկի խումբը ներկա ձեւաչափով բավականին կառուցողական ու համաձայնեցված աշխատանք է տանում: Հիշեցնենք, որ խոսքը Եվրոխորհրդարանի արտքին հարցերով հանձնաժողովի ընդունած փաստաթղթում դրույթի մասին է, որով Եվրոխորհրդարանին առաջարկվում է քննարկել Մինսկի խմբում Ֆրանսիային ԵՄ-ով փոխարինելու հավանականությունը:

Լուկաշեւիչը հայտարարել է, թե չի տիրապետում որեւէ տեղեկության, ըստ որի ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող երկիր Ֆրանսիայի մանդատը կարող է փոխանցվել: Նա հավաստիացրել է, որ Ֆրանսիան նման հարց օրակարգ չի բերել, համանախագահներն էլ բավականին ինտենսիվ աշխատում են, ընդ որում՝ նաեւ մեջտեղ բերելով «հսկայական ծավալի փաստաթղթեր, որ համաձայնեցվում են տարբեր մակարդակներում՝ ներառյալ ամենաբարձրը»:

Լուկաշեւիչը մեկնաբանել է ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող երկրների արտքին գերատեսչությունների ղեկավարների վերջին հայտարարությունը՝ դրա համար հիմք ներկայացնելով ՌԴ նախագահ Դմիտրի Մեդվեդեւի նախաձեռնությամբ եռակողմ՝ Ռուսաստան-Հայաստան-Ադրբեջան վերջին նախագահական հանդիպումը, որտեղ Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահները պատրաստակամություն են հայտնել «արագացնելու կարգավորման հիմնարար սկզբունքների աշխատանքը»:

Վերը նշվածն, ըստ Լուկաշեւիչի, հաստատում է, որ Մինսկի խմբի ձեւաչափը կայացած է, եւ խմբի ներուժն էլ բնավ սպառված չէ: Ըստ էության, այս կերպ եւս մեկ անգամ Մխ ձեւաչափից մանր-մունր բողոքներով ականջ տանող ադրբեջանական չինովնիկներին փորձում են հասկացնել, որ այդ ձեւաչափը, որի հետ աշխատելու պատրաստակամության տակ ամեն անգամ պատրաստակամորեն ստորագրում է բանակցությունների հիմնական մասնակից Ադրբեջանի նախագահը, հենց այն հիմնականն ու միակն է, որ ներկա դրությամբ զբաղվում է ղարաբաղյան խնդրում կարգավորման հասնելու միջնորդությամբ:

Մյուս կողմից, համանախագահող Ֆրանսիային որեւէ այլ կերպ փոխարինելու հավանականության հարցը կարող է քննարկվել որտեղ եւ ում կողմից ասես, սակայն այդ հարցում որոշիչ ու էական նշանակություն ունի ինչպես Հայաստանի, Լեռնային Ղարաբաղի եւ Ադրբեջանի, այնպես էլ մյուս համանախագահողների համաձայնությունը:

Ա. Հ.

«Աստծո օթեւան»-ը էլ չի օթեւանի Ճարտարապետների միությունում

Արդեն տեւական ժամանակ Հայաստանի ճարտարապետների միության շենքը կիրակի օրերին վարձակալության տրամադրվում է «Աստծո օթեւան» կրոնական կազմակերպությանը, որին Հայ առաքելական եկեղեցին համարել է աղանդ: «**Ազգ**»-ի հետ զրույցում Ճարտարապետների միության նախագահ **Մկրտիչ Մինասյանը** չհերքեց, որ ձմռան ամիսներին տեղ են տրամադրել կրոնական այդ կազմակերպությանը: Տրամադրել են, որովհետեւ նրանք ավետարանչական եկեղեցու ռեգիստր ունեին: «Ինձ տեղեկացրել են, որ նրանք ավետարանչականներ են, նրանց գրասենյակը հենց մեր միության դիմացն է, ԱՄՆ նախկին դեսպանատան շենքում»: Մինասյանը պատմում է, որ ձմռան ամիսներին իրենք գրեթե դահլիճը չեն օգտագործում եւ դեմ չեն վարձակալությամբ տրամադրել կազմակերպության, սակայն մինչ այդ ստուգում են, թե ինչ կազմակերպություն է եւ այլն», ասաց Մինասյանը՝ հավելելով, որ ապրիլից աղանդավորական այդ կազմակերպությունը միության դահլիճում հավաքներ չի անցկացնի: Պատճառը ոչ թե այն է, որ պարզվել է կազմակերպության տեսակը, այլ որովհետեւ միությունը նախաձեռնել է բազմաթիվ միջոցառումներ, հանդիպումներ, քննարկումներ:

Հ.Հ.

Հ. Գ. «Աստծո օթեւան» կրոնական կազմակերպության մասին առավել մանրամասն տեղեկություններ կներկայացնենք «Ազգ»-ի երեքշաբթի օրվա համարում:

Դենքթաշի դերը Դինքի սպանության գործում

Պրոֆ. Թաներ Աքչամը թուրքական «Թարաֆ» թերթում լույս ընծայած իր հոդվածում նմանություններ է հայտնաբերել Հրանտ Դինքի եւ 1915-ի ցեղասպանության պարագլուխ Թալեաթ փաշայի սպանության ձեւերում եւ բացատրել, թե հունվարի 13-ին մահացած Ռաուֆ Դենքթաշը Թալեաթի սպանության վրեժը լուծել էր Հրանտ Դինքի սպանությունը կազմակերպելով՝ «Էրգենեքոն» ծայրահեղական «խորքային պետության» միջոցով, տեղեկացնում է Կանադայից «Արագաց» շաբաթաթերթը: Նա հայտնել է, որ Դենքթաշն այդ կազմակերպության մաս էր կազմում: Նաեւ նախագահն էր «Թալեաթ փաշա» հանձնախմբի, որի նպատակն էր վերականգնել դահճապետի վարկն ու հեղինակությունը զանազան միջոցառումներով Լոզանում, Բեռլինում, Փարիզում եւ Հյուսիսային Կիպրոսում: Այդ միջոցառումները անցկացվել են «Հայոց ցեղասպանությունը սուտ է» կարգախոսի ներքո:

«Մենք այս պետությունը կառուցել ենք 1915-ի հիմքերի վրա: Դինքի ոճրին ավելի լույս սփռելը հարցականի տակ դնել է նշանակում այս պետության գոյությունը եւ խարխլել դրա հիմնաքարերը: Մենք բոլորս Ռաուֆ Դենքթաշ ենք եւ միշտ մնալու ենք Թալեաթ փաշայի կողմնակիցները», հորդորել են Դենքթաշի հուղարկավորությանը մասնակից սգակիրները:

Դենքթաշը թուրք կիպրացի էր, որ Հյուսիսային Կիպրոսի բռնագրավումից հետո դարձել էր դրա նախագահը:

Հ. Ծ.

Արաբական լիգայի «Բաղդադյան հռչակագիրը» Սիրիայի վերաբերյալ

Իրաքի մայրաքաղաքում երեկ ավարտվել է Արաբական պետությունների լիգայի գագաթաժողովը, որի գլխավոր թեման Սիրիայի իրադրությունն էր: Լիգայի երկրների ղեկավարները իրենց հանդիպման վերջում ընդունել են համատեղ հայտարարություն, որն արդեն հայտնի է «Բաղդադյան հռչակագիր» անունով:

Կազմակերպության նախորդ հայտարարությունների համեմատությամբ այս փաստաթուղթն աչքի է ընկնում ավելի զուսպ ոճով: ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ը նշում է, որ «հռչակագրի» հիմքում Սիրիայի գծով ՄԱԿ-ի եւ լիգայի հատուկ դեսպան Կոֆի Անանի առաջարկած խաղաղ կարգավորման ծրագիրն է: Արաբական լիգան Դամասկոսից պահանջում է «լուրջ երկխոսություն» սկսել ընդդիմության հետ: «Հռչակագիրը» չի պահանջում Սիրիայի նախագահ Բաշար Ասադի հրաժարականը եւ շեշտում է երկրի ներքին գործերին միջամտելու անթույլատրելիությունը:

Գագաթաժողովի անցկացման ժամանակ Բաղդադի փողոցներում հերթապահություն էին անում ուժային կառույցների մոտ 100 հազար աշխատակիցներ: Եվ այդուհանդերձ միջադեպեր արձանագրվեցին: Այսպես, երեկ Բաղդադի վարչական թաղամասի մոտակայքում որոտացել է երկու պայթյուն: Տուժածների մասին ոչինչ չի հաղորդվում:

Ապրիլի մեկին կնշվի Ծաղկազարդը

Հայ առաքելական եկեղեցին այս տարի Ծաղկազարդը կնշի ապրիլի 1-ին: Այս մասին տեղեկացանք Արարատյան հայրապետական թեմի մամլո դիվանից: Ծաղկազարդը խորհրդանշում է Քրիստոսի հաղթական մուտքը Երուսաղեմ:

Ծաղկազարդի նախօրեին՝ շաբաթ օրը, կատարվում է Ծաղկազարդի նախատոնակը, բացվում է խորանի վարագույրը, իսկ հաջորդ օրը ժամերգությունից հետո մատուցվում է պատարագ: Ծաղկազարդի առավոտյան եկեղեցում օրհնվում են ձիթենու կամ ուռենու ոստերն ու բաժանվում ժողովրդին:

Ծաղկազարդի օրը Գարեգին Բ կաթողիկոսի բարձր տնօրինությամբ հռչակված է որպես մանուկների օրհնության օր՝ նկատի ունենալով, որ Տիրոջ՝ Երուսաղեմի տաճար մտնելու ժամանակ մանուկները բացականչում էին՝ «Օրհնություն Դավթի որդուն»: Այդ օրը եկեղեցիներում կատարվում է մանուկների օրհնության կարգ:

Ի. Պ.

ԱԶԳ

Ընթացիկ

Մենք չենք պահանջում ավելին, քան դրա իրավունքն ունենք

ՀՅԴ Հայ դատի կենտրոնական խորհրդի ատենապետ **Հակոբ Տեր-Խաչատուրյանի** նախագահությամբ երեկ սկսվեց ՀՅԴ Հայ դատի հանձնախմբերի եռօրյա խորհրդաժողովը, որին աշխարհի 30 հանձնախմբերից մասնակցում էին 25 հանձնախմբի 60 ներկայացուցիչներ: Այս խորհրդաժողովը Երեւանում գումարվող չորրորդն է, որի հրամայականն, ըստ ՀՅԴ Հայ դաս հայաստանյան գրասենյակի պատասխանատու **Կիրո Մանոյանի**, Արցախի խնդրով եւ Հայոց ցեղասպանության ճանաչման եւ հատուցման հարցով մի նոր հանգրվանի խնդիրների վերհանումն է նոր քայլերի ձեռնարկման գիտակցմամբ. Արցախի անկախության ճանաչումը տարբեր միջոցներով նախ, ապա եւ՝ հատուցման հարցի հետ կապված՝ հատուցման փաթեթի ձեւավորումն է, որը տարբեր շրջանակներում արդեն սկսել են քննարկել: ՀՅԴ-ն ձեւավորել է մասնագետների խումբ, որ 2007 թվականի դեկտեմբերից այդ ուղղությամբ աշխատում է, որովհետեւ կարծես հասել է պահը ու պետք է հասկանալ, որ Հայոց ցեղասպանություն ասածը պատմական փաստի ճանաչումը չէ միայն: Պետք է պատասխանատվության ճանաչում լինի նաեւ Թուրքիայի կողմից եւ հատուցում: Մի խոսքով՝ այս խորհրդաժողովը կքննարկի Հայ դատի այս նոր խնդիրները, ինչպես նաեւ Հայաստանի ներքին եւ արտաքին մարտահրավերները, ներառյալ Ջավախքի հայության իրավունքների պաշտպանության ոլորտի վերաբերյալ մոտեցումները:

Խորհրդաժողովի բաց մասում երկու ելույթի խաղումներից գուցե ընթերցողը պատկերացում կազմի հետագա քննարկումների ուղղվածության մասին: ՀՅԴ բյուրոյի անդամ, ՀՅԴ խորհրդարանական խմբակցության ղեկավար **Վահան Հովհաննիսյանն** իր խոսքը հաստատեց նրան, որ նույնիսկ այժմ Հայաստանում եղած խորթ երեւույթների բացասական ֆոնը ցեղասպանության ածանցյալ, շարունակական հետեւանք է, հետեւաբար համակարգով է պետք այժմ աշխատել, դրսի ու ներսի խնդիրների համալիրը նկատի ունենալով. «Համարել, որ Ցեղասպանության ճանաչման համար պայքարը, Արցախի ճանաչման համար պայքարն այնքան էլ ակտուալ չեն եւ պետք է կենտրոնանալ միայն լոկալ, գավառական մակարդակի իջեցված տեղական խնդիրների վրա, արդյունք չի բերի»,- նշեց Վահան Հովհաննիսյանը՝ միաժամանակ նշելով երկրի ներսում խնդիրների համար պայքարելու անհրաժեշտությունը: Նա հատկապես ընդգծեց խորհրդարանական դիվանագիտության դերը, որպես օրինակ բերվեց Մինսկի խմբում Ֆրանսիայի մանդատը ԵՄ մանդատով փոխելու բանաձեւի առկայությունը, որի դեմ աշխատելու մեծ ասպարեզ կա, սակայն մեր խորհրդարանի կազմը այսօր պատրաստ չէ դիվանագիտական աշխատանքի: Մինչդեռ այսօր մեր դիվանագիտությունը, որ բախվում է մի շարք առաջնահերթ խնդիրների, նախ պետք է փաթեթով, հայեցակարգով ճշգրտի անելիքները. որտեղ նույնիսկ այժմ պաշտոնական դիվանագիտությունը արդյունք տալ, այնտեղ խորհրդարանական դիվանագիտությանը պետք է դիմել, իսկ վերջինիս արդյունք չտալու դեպքում՝ ժողովրդական դիվանագիտությանը:

ՀՅԴ Գերագույն մարմնի ներկայացուցչ **Արմեն Ռուստամյանը** եւս նշեց, որ մարտահրավերների առումով պետք է համախմբել ուժերը, քանի որ միշտ պետք է պատրաստ լինել, որ աշխարհաքաղաքական զանազան զարգացումներով կարող են հայերիս զանազան երազներն իրականություն դառնալ: Իսկ մարտահրավերների դեմն առնելու համար համակարգում է պետք, ինչն արդյունավետ իրականացվում է Հայ դատի գրասենյակների խողովակով՝ ապահովելով նախաձեռնողականություն եւ անխոցելիություն: Նա նշեց, թե արտաքին քաղաքականության բաղադրիչ պետք է լինի ոչ միայն Հայոց ցեղասպանության ճանաչման, այլեւ հատուցման խնդիրը: Իսկ Հայ դատի բարձրացրած եւ հետաքրքրած խնդիրները տեղավորվում են միջազգային չափորոշիչներում՝ մենք չենք պահանջում ավելին, քան դրա իրավունքն ունենք:

Մ. Խ.

ԽԱՐԴԱԽՈՒԹՅՈՒՆ

«Մաքուր ջուր» մաքուր չէր աշխատում

Ընկերությունը տուգանվեց անբարեխիղճ մրցակցության համար

Տնտեսական մրցակցության պաշտպանության հանձնաժողովը երեկ տեղի ունեցած նիստի ժամանակ «ՄԳԱ Վոքը» («Մաքուր ջուր» արտանետիչ) ընկերության վարքագիծը շուկայում որակեց որպես անբարեխիղճ մրցակցություն՝ կիրառելով օրենսդրությամբ սահմանված առավելագույն պատժաչափ՝ տուգանք տարեկան հասույթի 1 տոկոսի չափով, եւ հանձնարարեց 5-օրյա ժամկետում վերացնել խախտումը:

Խմելու ջրի արտադրությամբ զբաղվող «Էվրի Դեյ» («Բյուրեղ» արտանետիչ) ընկերությունը հանձնաժողովին բողոք է ներկայացրել, տեղեկացնելով, որ մրցակից «ՄԳԱ Վոքը» ընկերությունը սպառողին առաջարկում է խմելու մաքուր ջուր, սակայն ջրի հումքային ծագման մասին տալիս է ոչ ճիշտ եւ սպառողին թյուրիմացության մեջ գցող տեղեկություններ: Մասնավորապես, որ «Մաքուր ջրի» շշալցման ժամանակ օգտագործվում է ոչ թե լեռնային աղբյուրի, այլ քաղաքային սովորական ջրամատակարարման ցանցի ջուր:

Այդ բողոքի հիման վրա հանձնաժողովն ուսումնասիրել է «ՄԳԱ Վոքը» գործունեությունը եւ բացահայտել, որ թեեւ ընկերությունը իր արտադրատեսակի վրա եւ գովազդներում նշում է, որ օգտագործում է բացառապես Գառնիի բարձրադիր լեռնային աղբյուրից հոսող ջուրը, սակայն դա իրականությանը չի համապատասխանում: Իրականում «Մաքուր ջուրը» շշալցվում է Նուբարաշենի տարածքում գտնվող քաղաքային ջրամատակարարման ցանցի ծորակներից: Հանձնաժողովի դիտարկմամբ, «ՄԳԱ Վոքը» ընկերությունը անբարեխիղճ մրցակցության միջոցով մրցակցային լուրջ առավելություններ է ստացել: Մասնավորապես իր կողմից թողարկվող արտադրանքի վրա կատարելով ավելի քիչ ծախսեր՝ հնարավորություն է ունեցել ընդլայնվելու շուկայում եւ շահեկան բիզնես ծավալելու: Ավելին, էժան ինքնարժեքի շնորհիվ շատ դեպքերում շահել է պետական գնումների մրցույթներում՝ առաջարկելով անհամեմատ ցածր գին: Միաժամանակ, ընկերությունն ակնհայտորեն ոտնահարել է սպառողների շահերը՝ նրանց գցելով շփոթության եւ թյուրիմացության մեջ:

«ՄԳԱ Վոքը» այս շուկայում գործող ամենախոշոր ընկերությունն է եւ 2011թ.-ին հանձնաժողովի կողմից ճանաչվել է գերիշխող դիրք ունեցող՝ ավելի քան 35 տոկոս մասնաբաժնով: Սակայն ներկա ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ընկերության կշիռը շուկայում շատ ավելի մեծ է, եւ թողարկվող արտադրանքի ծավալները զգալիորեն փիչ են ներկայացվել: Մասնավորապես, «Երեւան ջրից» ստացված ջրի ծավալները համադրելով ընկերության կողմից թողարկված արտադրանքի ծավալների հետ պարզվել է, որ ընկերությունը ցույց է տալիս 55-60 տոկոսի չափով ջրի կորուստ, որն, ըստ հանձնաժողովի մասնագետների, անհնար է: Համադրվել են նաեւ ընկերության թողարկած արտադրանքի համապատասխան ծավալները այլ ընկերություններից ձեռք բերված շշերի խցաններ քանակի հետ, եւ պարզվել է, որ ընկերությունը իրականում ավելի շատ արտադրանք է թողարկում, քան ցույց է տալիս:

Մնում է միայն ավելացնել, որ նման լկտիությունը, ցավոք, եզակի դեպք չէ հայկական բիզնես իրականությունում:

ԱԲԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀԱԿ-ը եւ Տեր-Պետրոսյանը բացեցին...

1-ին էջից

Բերվեցին տնտեսական ցուցանիշներ՝ երկրի արտաքին՝ 1,5 մլրդից 3,8 մլրդ դոլարի հասած պարտք, գնաճի պատկեր, դրամի արժեզրկում, տնտեսության խորացած մենաշնորհացում, պաշտոնական թվով 120 հազ արտագաղթած, խաղաղ պայմաններում զոհված 200 զինծառայող, հայ-թուրքականի եւ ԼՂՀ խնդրի փակուղի արտաքին ոլորտում: Իշխանության բոլոր այս եւ այլ մեղքերի վրա կանգ առնելով՝ ՀԱԿ-ի առաջնորդը ոլորտ առ ոլորտ իրենց մշակած ծրագրերը դեմ արեց՝ նշելով, որ իշխանության գալու դեպքում դրանք իրականացվելու են: Նա չմոռացավ իշխանության գալուց անմիջապես հետո Սերժ Սարգսյանի պաշտոնանկության հարց բարձրացնելու եւ քրեական պատասխանատվության ենթարկելու եւ մի շարք այլ անհետաձգելի քայլերի մասին, այդ թվում՝ հասարակության աչքում վարկաբեկված ՍԴ-ի կազմի վերանայումը, լրիվ պողուլիզմի հոտ արձակող ԽՍՀՄ խնայբանկերի ավանդների՝ պարտատոմսերի ձեւակերպմամբ ասիճանական մարումը, ծննդյան կես միլիոն դրամանոց միանվագ նպաստի սահմանումը եւ այլ քաղցր խոստումներ: Դե, այս ծրագրային դրույթները դեռ մեկ ամիս շուռումուռ ենք տալու:

Միկրոավտոբուսների թիվը կկրճատվի, ավտոբուսներինը՝ կավելանա

Քանի որ 2005-ին մշակված եւ գործող ներքաղաքային կանոնավոր ուղեւորափոխադրումների երթուղային ցանցը ոչ միայն ներկայիս պայմաններին չէր բավարարում, այլեւ մայրաքաղաքում տրանսպորտով երթեւեկելը ուղիղ վտանգ էր առողջությանը, կյանքին եւ նյարդերին, քաղաքապետարանի տրանսպորտի վարչությունը 2013-2015 թթ. համար նոր երթուղային ցանց է մշակել, որը նախատեսում է կրճատել միկրոավտոբուսների երթուղիներն ու միկրոավտոբուսների քանակը՝ ավելացնելով մեծ եւ միջին տեղատարությամբ ավտոբուսներով: Քաղաքապետարանի տրանսպորտի վարչության պետ Հենրիկ Նավասարդյանը շեշտում է, որ նոր երթուղային ցանցը մշակելիս հաշվի են առել ոչ միայն հասարակական կազմակերպությունների, այլեւ բնակչության դժգոհությունները: Օրակարգային հարցը միկրոավտոբուսների կրճատումն է: Առաջիկա 3 տարվա ընթացքում նախատեսվում է 109 միկրոավտոբուսային երթուղիների թիվը նվազեցնել՝ հասցնելով 76-ի: Եթե ներկայիս երթուղային ցանցով մայրաքաղաքն օրական սպասարկում է 2600 միկրոավտոբուս, ապա նոր հայեցակարգով միկրոավտոբուսների թիվը կկրճատվի՝ հասնելով 1284-ի: Ավտոբուսային երթուղիների թիվն էլ 48-ից կդառնա 68, ավտոբուսների թիվը կհասցվի 939-ի: Ներկա դրությամբ Երեւանում կա 612 ավտոբուս: Նավասարդյանը համոզված է, որ ժամանակի ընթացքում 326 ավտոբուսների բացն էլ կլրացվի: Թեպետ գնաստերերից հնչել են բազմաթիվ դժգոհություններ, սակայն քաղաքապետարանից հստակեցրել են. մրցույթի մասնակցելու համար անհրաժեշտ են ավտոբուսներ: Երթուղային նոր ցանցով մայրաքաղաքի փոքր կենտրոնը վերջնականապես կազատվի միկրոավտոբուսներից: Աբովյան, Ամիրյան, Հանրապետության հրապարակ, Թումանյան, Սայաթ-Նովա, Նալբանդյան, Տերյան փողոցները կսպասարկեն միայն ավտոբուսները: Նոր երթուղային ցանցը նախատեսում է նաեւ մայրաքաղաքի տարբեր թաղամասերը միմյանց կապող երթուղիների ստեղծում: «Իհարկե, այդ խնդիրն ամբողջությամբ լուծելն անհնար է, սակայն կարողացել ենք հասցնել նվազագույնի», ասում է Նավասարդյանը:

Եթե այսօր միկրոավտոբուսներից օգտվում է երեւանցիների 75 տոկոսը, իսկ ավտոբուսներից՝ 15 տոկոսը, ապա նոր ցանցի գործադրմամբ միկրոավտոբուսներից կօգտվի միայն 41 տոկոսը, ավտոբուսներին նախապատվություն կտա 48 տոկոսը: Նոր երթուղային ցանցով կբեռնաթափվեն նաեւ մայրաքաղաքի գերծանրաբեռնված փողոցները: Եթե այսօր մեկ ժամում Աբովյան փողոցով անցնում է 500 միավոր հասարակական տրանսպորտ, նոր հայեցակարգով թիվը կհասնի 287-ի: Հասարակական տրանսպորտում ուղեվարձի փոփոխություն առաջիկայում նախատեսված չէ: Սահմանվել է նաեւ հասարակական տրանսպորտի չվացուցակը՝ միկրոավտոբուսային երթուղիներում ինտերվալը կլինի 5-7 րոպե, ավտոբուսային երթուղիներում՝ 8-10:

Ծրագիրը երեկ հաստատել է քաղաքապետ Տարոն Մարգարյանը: Շուտով կսկսվի մրցույթների հայտարարման եւ կազմակերպման փուլը: Առաջին մրցույթը նախատեսված է անցկացնել մայիսին, վերջինը՝ նոյեմբերին:

Հ. Հ.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան Ի տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
www.azg.am
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենեակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483
Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն
/ հեռ 529353
Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

Ամփոփում

Երեք Հայաստան՝ ըստ Գառնիկ Իսագուլյանի

Ազգային ժողովում Հայաստանի նախագահի ներկայացուցիչ **Գառնիկ Իսագուլյանը** մոտեցող խորհրդարանական ընտրությունները բոլոր նախորդներից ավելի է կարեւորում, քանի որ Հայաստանի վրա այժմ միջազգային ուշադրությունը մեծ է, ու այնպիսի ընտրություններ պետք է անցկացվեն, որոնք բոլոր մյուս նախորդների դեպքում փաստորեն չեն ապահովվել՝ նախորդ ընտրություններում հնարավոր չեղավ խուսափել մարտի 1-ի անցանկալի երեւույթներից: Իսկ այս ընտրությունների ազատ-թափանցիկը պետք է, քանի որ նաեւ կարեւոր է, թե հետընտրական ինչ իրավիճակով ենք գնալու նախագահական ընտրություններ: Դրա համար եւ իշխանությունը, եւ ընդդիմությունը պետք է անեն ամեն ինչ՝ ազատ, արդար եւ ժողովրդավարական ընտրություններ անցկացնելու համար: Առաջ մենք՝ լրագրողներս էինք նման բաներ գրում թերթերում, հիմա Գ. Իսագուլյանն ասաց՝ կա երեք Հայաստան. առաջինն իշխանական դաշտի ներկայացրածն է, երկրորդը՝ ընդդիմադիր դաշտինը, բայց իրականը երրորդ Հայաստանն է, որտեղ ապրում ենք մենք բոլորս: Այն ուժը, որի ծրագրերում կերեւա այդ երրորդ Հայաստանը, եւ նրա խնդիրների լուծումները կառաջարկվեն, այդ ուժն է հաղթելու խորհրդարանական ընտրություններում:

Գ. Իսագուլյանը երեկ «Հայֆ» ակումբում էր լրագրողներին հանդիպել: **«Ազգի»** հարցին, թե ո՞ր ուժն այդպիսի հնարավորություն ունի, Իսագուլյանը ասաց՝ բոլորս, հետո հավելեց, որ նախ ՀՀԿ-ն է տիրապետում իշխանական, ֆինանսական եւ այլ լծակների, եւ նրա դիրքը նախընտրելի է: ԲՀԿ-ն էլ ոչ միայն ֆինանսական, այլեւ այլ լծակների նույնպես տիրապետում է, մի խոսքով՝ հիմնական ֆավորիտն այս երկուսն են իշխանական ուժերից: ՀՅԴ-ն էլ, ըստ նրա, երկար տարիների փորձով խորհրդարան մտնելու հնարավորություն ունի: «Բա ՕԵԿ-ը», հարցրին: «Իշխանական լծակ ունեցողները մեծ հնարավորություն ունեն», ՕԵԿ-ի վրա էլ հնարավորությունների վերմակը քաշեց Իսագուլյանը:

ՀՀԿ-ԲՀԿ հակասությունների մասին խոսակցություններին Գ. Իսագուլյանը հակադրեց այն միտքը, թե կոալիցիան տարբեր ուժերից է կազմվել, ու նրանց մեջ մրցակցություն, իսկապես, կարող է լինել, բայց տարաձայնությունների մասին իրեն ոչինչ հայտնի չէ: Իսկ ընտրությունների ընթացքում այս երկու ուժերի հարաբերությունները կսրվե՞ն. «Պայքարը, որքանով ներկայացվում է պայքար, իրականության մեջ որպես այդպիսին գոյություն չունի», ասաց նա՝ նշելով, թե դա ավելի շատ մամուլի մակարդակով է, ինչպես, ի դեպ, եւ համամասնական ցուցակների վերաբերյալ դժգոհությունը. էմոցիոնալ մակարդակում ոմանք ինչ-որ լուրերի են պատասխանում ՁԼՄ-ների ճնշմամբ, դրան հետեւում են այլ պատասխաններ, եւ այդպես շարունակ:

Հետաքրքրական է, որ Գ. Իսագուլյանն իր խոսքը չարեց ՀԱԿ-ի հետ կապված հարցերին պատասխանելիս եւ անգամ ասաց, որ առանց բանակցությունների սեղանի շուրջը նստելու էլ կարելի է ՀԱԿ-ի հետ ինչ-ինչ հարցերում համագործակցություն: Նա օրինակ բերեց այն, որ ԲՀԿ-ն անպատասխան թողեց ՀԱԿ-ի համագործակցության առաջարկը, հարցը բաց մնաց. սա էլ Իսագուլյանը նորմալ համարեց՝ ո՞վ գիտե, թե դեռ էլ ինչեր կլինեն, հնարավոր է՝ երկու ուժերն էլ խորհրդարան անցնելուց հետո որպես խորհրդարանական ուժ համագործակցեն: «ՀՀԿ-ի դե՞մ», հետաքրքրվեցին. «Ինչո՞ւ «դեմ», կարծում եք ՀԱԿ-ն ու Հանրապետականը երբեք չե՞ն համագործակցել, եղել են քաղաքական խնդիրներ, երբ ՀԱԿ-ն աջակցություն է արտահայտել», ասաց:

Միաժամանակ նա ենթադրեց, որ ընդդիմությունն արդեն սցենար ունի հետընտրական վիճակը տրելու եւ ավելի հեղափոխական դարձնելու՝ աշխատելով պահել այն մինչեւ նախագահական ընտրություններ:

Մ. Խ.

Հայաստանում ծխում է տղամարդկանց կեսից ավելին

Ծխելուց առաջացած հիվանդություններից Հայաստանում տարեկան 3-4 հազար մարդ է մահանում:

Առողջապահության նախարարության հանրային առողջության բաժնի պետ Արտեմ Բազարչյանի խոսքով՝ ծխելուց առաջացած հիվանդություններն ի հայտ են գալիս ծխելուց 10-15 տարի անց: Դրանցից տարածված են հատկապես թոքի քաղցկեղն ու սրտանոթային հիվանդությունները:

Հայաստանում ծխում է տղամարդկանց 52-55 տոկոսը, անուամենայնիվ, երեկ լրագրողների հետ հանդիպման ժամանակ Արտեմ Բազարչյանը հուսադրեց, որ ծխող տղամարդկանց թիվը վերջին 10 տարիներին նվազել է՝ 10 տարի առաջ 60 տոկոս էր:

Ըստ նրա՝ ծխող կանանց թիվն ավելի փոքր է, սակայն կանանց շրջանում ավելի շատ ծխում են երեւանաբնակները, քան մարզերում ապրողները: Երեւանում 35-55 տարեկան կանանց մեջ 6-7 տոկոսը կազմում են ծխողները:

Ինչ վերաբերում է ծխելու դեմ պայքարի օրենսդրական մեխանիզմներին, ապա հիշեցնենք, որ Հայաստանը նույնպես ունի հակածխախոտային օրենք, սակայն օրենքը խախտողների հանդեպ պատժիչ միջոցներն արդյունավետ չեն, պայքարն էլ, ինչպես տեսնում ենք, ոչ հետեւողական: Անհրաժեշտ է հետեւել, որ հասարակական վայրերում ծխելու արգելքը պահպանվի՝ հաշվի առնելով, որ ծխողների կողքին պարբերաբար գտնվող չծխողները, եւս ռիսկային խմբում են, հատկապես երեխաները:

Ռ. Պ.

Բրունո Դյուքուա. «MegaFon-ի հետ մենք հեղափոխություն ենք անում ռոմինգում»

Երկու ընկերություններ մեկնարկում են ռազմավարական համագործակցություն

Երեկ Orange Արմենիան՝ Ֆրանս Տելեկոմի հայաստանյան մասնաճյուղը եւ MegaFon-ը՝ շարժական կապի ռուսաստանյան ամենամեծ օպերատորներից մեկը, հայտարարեցին ռազմավարական համագործակցության մեկնարկի մասին: Այս նոր համագործակցության շնորհիվ Orange Արմենիայի բաժանորդները, գտնվելով Ռուսաստանում, կօգտվեն ռոմինգի համար նախկինում երբեւէ չառաջարկված բացառիկ սակագներից: Մասնավորապես, միանալով MegaFon-ի ցանցին՝ Orange Արմենիայի բաժանորդները կզանգեն Orange-ի եւ MegaFon-ի բաժանորդներին եւ զանգեր կստանան նրանցից 30 դրամ/րոպե ֆանտաստիկ սակագնով:

«Orange-ը հզոր միջազգային ընկերություն է, եւ մենք հետեւողական ենք մեր բաժանորդներին առաջարկել լավագույն պայմանները ոչ միայն Հայաստանում, այլ նաեւ ռոմինգի համար, հատկապես այն երկրներում, ուր նրանք հաճախ են լինում: Ռուսաստանը հայաստանցիների կողմից ամենաշատ այցելվող երկրների ցանկում է, եւ մենք երջանիկ ենք այսօր առաջարկել ռոմինգի մի սակագին, որն անգամ ավելի ցածր է, քան Հայաստանում ցանցից դուրս զանգերի միջին սակագինը: Բազմաթիվ հայաստանցիներ, գնալով Ռուսաստան, ձեռք են բերում տեղական օպերատորներից որեւէ մեկի SIM քարտը, որը սովորաբար շատ կարճ կյանք է ունենում: Այսուհետեւ մեր բաժանորդները դրա կարիքը չեն ունենա եւ Ռուսաստանում իրենց Orange համարով կզգան համարյա ինչպես տանը: Սրանով MegaFon-ի հետ միասին մենք հեղափոխություն ենք անում ռոմինգում», ասաց Orange Արմենիայի գլխավոր տնօրեն **Բրունո Դյուքուան**:

«Օպերատորների ռոմինգային քաղաքականության հաջողության հիմնական գործոնը արտասահմանյան գործընկերների հետ արդյունավետ գործընկերային հարաբերություններն են, որոնք մեզ թույլ կտան բաժանորդներին առաջարկել ցածր սակագներ արտերկրում շարժական հեռախոսակապից օգտվելու համար: Ուրախ եմ նշել այս հերթական ձեռքբերումը՝ Orange Արմենիայի հետ շահավետ համագործակցության սկիզբը», այս առթիվ ասել է MegaFon-ի ֆեդերալ եւ միջազգային կորպորատիվ վաճառքների գծով փոխտնօրեն **Կոնստանտին Սոլոդուխինը**:

MegaFon-ի ցանցում Orange Արմենիայի բաժանորդներն ունենալու են այլ առավելություններ եւս. այլ մուտքային զանգերի եւ տեղական այլ օպերատորների բաժանորդներին ուղղված ելքային զանգերի մեկ րոպեի արժեքը կլինի 60 դրամ, իսկ դեպի Հայաստանի այլ ցանցերի բաժանորդներին կատարված զանգերինը՝ 120 դրամ: Orange Արմենիայի բաժանորդները նաեւ կունենան բացառիկ սակագին ռոմինգում GPRS-ից օգտվելու համար՝ ընդամենը 90 դրամ/ՄԲ:

Ռոմինգի բացառիկ սակագները գործելու են ապրիլի 1-ից մինչեւ հունիսի 30-ը:

Ավանդ «Բազմարժութային»՝ երեք առավելություններ մեկ ավանդատեսակում



▼ *Քարշ տոկոսադրույք*

▼ *Արժույթի փոխարկում այլ արժույթով ԱՌԱՆՑ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐԻ ԿՈՐՍՏԻ*

▼ *Պայմանագրի վաղաժամկետ խզում՝ ԱՌԱՆՑ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐԻ ԿՈՐՍՏԻ*

Ազատ դրամական միջոցների կառավարման ամենահայտնի եւ ամենապարզ միջոցը բանկային ավանդի ներդրումն է:Եթե կամենում եք եկամուտ ստանալ ներդրվող գումարի դիմաց, սակայն չեք բացառում ժամկետից շուտ այդ գումարից օգտվելու հնարավորությունը, ապա Զարգացման Հայկական Բանկում կգտնեք ձեզ համար ամենահարմար ավանդատեսակը: Զարգացման Հայկական Բանկը ֆիզիկական եւ իրավաբանական անձանց առաջարկում է ժամկետային ավանդի տեսակ՝ «Բազմարժութային ավանդ»՝ ՀՀ դրամով՝ 12 %, ԱՄՆ դոլարով՝ 9 %, Եվրոյով՝ 7 % տարեկան տոկոսադրույքով, ամեն ամիս տոկոսագումարի վճարման պայմանով: «Բազմարժութային» ավանդի առանձնահատկությունը նրանում է, որ այն թույլ է տալիս բաշխել խնայողությունները մեկ ավանդի սահմաններում երեք արժույթների միջոցով՝ ՀՀ դրամով, ԱՄՆ դոլարով եւ Եվրոյով: **Ավանդի գործողության ամբողջ ընթացքում, ցանկացած պահի ավանդատուն կարող է փոխարկել ավանդի որեւէ արժույթով մնացորդն այլ արժույթի առանց տոկոսագումարի կորստի եւ ցանկացած պահի հետ վերցնելով ավանդի գումարը կամ նրա մի մասը՝ ավանդատուն ստանում է նաեւ պայմանագրով սահմանված տոկոսներն ամբողջական ամիսների համար:**

Ավանդի մի արժույթով մասի փոխարկումը եւ այլ արժույթով մասի /մասերի/ համալրումը չի դիտվում որպես ավանդի նվազեցում: Ավանդի գործողության ամբողջ ընթացքում հաճախորդը կարող է համալրել ավանդը ներդրված ավանդի սկզբնական գումարի չափով: Թույլատրվում է ավանդի գումարի նվազեցում /պակասեցում/, որի դեպքում ամբողջական ամիսների համար տոկոսագումարը հաշվարկվում է պայմանագրային դրույքաչափերով՝ ՀՀ դրամով՝ 12 %, ԱՄՆ դոլարով՝ 9 % եւ Եվրոյով՝ 7 % տարեկան, իսկ ոչ ամբողջական ամսվա (մնացորդային օրերի) համար՝ ցպահանջ ավանդների համար սահմանված դրույքաչափերով:

Ավանդի նվազագույն գումարը սահմանված է 100,000 ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթ, իսկ առավելագույնը՝ 50,000,000 ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթ: Տոկոսագումարները վճարվում են ամսական կտրվածքով՝ ավանդի յուրաքանչյուր արժույթով մնացորդի փաստացի օրերի դիմաց:

Բացի վերոնշյալ ավանդատեսակից, Զարգացման Հայկական Բանկում յուրաքանչյուր ավանդատու կարող է գտնել իրեն հարմար ավանդատեսակ: Նշեմ, որ մինչեւ մայիսի 31-ը գործում է նոր «Մախսիմում» ավանդատեսակ մախսիմում տոկոսներով, մասնավորապես՝ ՀՀ դրամի դիմաց՝14%, ԱՄՆ դոլարի՝ 10% եւ Եվրոյի՝ 8% տարեկան տոկոսադրույքներով:

«Զարգացման Հայկական Բանկ» ԲԲԸ
Մանրամասների համար՝
Տեղ. հեռախոս՝ 59 15 15
www.armdb.com
info@armdb.com

Հայ ժողովուրդն իր դարավոր պատմության ընթացքում ունեցել է անհատներ, որոնց գործունեությունն ուղղված է եղել ազգին անմնացորդ ծառայելու վեհ նպատակին: Այդ անհատների համաստեղությունում ուրույն տեղ ունի Հայոց Հայրիկը՝ Մկրտիչ Խրիմյանը:

Հայրիկը ծնվել է Վանի շրջանի Առճակ գյուղում 1820 թվականի ապրիլի 4-ին: Սկզբնական կրթությունը ստացել է իր հորեղբոր՝ Խաչատուրի մոտ, այնուհետեւ ուսանել է Վասպուրականի Լիմ եւ Կտուց անապատների վանքերին կից դպրոցներում: Որոշ ժամանակ անց Հայրիկը թողնում է ուսումը, անցնում Վան եւ շուրջ հինգ ամիս շրջում Վասպուրականի բոլոր գաւառները, ծանոթանալով հայրենի երկրի բնությանը, ժողովրդի կյանքին, նրա պատմաճարտարապետական հուշարձաններին: Նա ականատես եղավ հայերի նկատմամբ թուրք իշխանավորների եւ նրանց կողմից խրախուսվող քրդական ցեղերի կատարած բարբարոսություններին, մզկիթների վերածված կամ ավերակ դարձած եկեղեցիներին: Հայ ժողովրդի մեջ սկսել էր աստիճանաբար հասունանալ զենքի միջոցով ազատություն ձեռք բերելու գաղափարը, որին նպաստում էին նաեւ Օսմանյան Թուրքիայի դեմ բալկանյան մի շարք երկրներում սկսված բուրժուա-ժողովրդավարական հեղափոխությունները: Անհրաժեշտություն էին դարձել ժողովրդին լուսավորելը եւ նրա մեջ ազգային ինքնագիտակցությունն արթնացնելը: Եվ այդ նպատակների իրագործմանն էլ նվիրաբերեց իր կյանքը մեծ հայրենասերը:

1847 թ. նա ուղեւորվում է Արեւելյան Հայաստան, լինում Էջմիածնում, Անիում, Գյումրիում, ապա անցնում է Թիֆլիս, Բաթում, գալիս Կ. Պոլիս, որտեղ մնում է մինչեւ 1850 թ.: Այստեղից Մ. Խրիմյանը ուղեւորվում է Երուսաղեմ, ապա՝ Կիլիկիա եւ որպես ուսուցիչ մեկ տարի աշխատում Սիսի դպրոցում:

1852 թ. Մ. Խրիմյանը վերադառնում է Վան եւ երկու տարի անց, իր ժողովրդին եւ ազգին ավելի օգտակար լինելու նպատակով, 1854 թ. փետրվարի 14-ին, Աղթամարի Սբ Խաչ եկեղեցում ձեռնադրվում է վարդապետ՝ կարդալով իր առաջին քարոզը եւ խոստանալով ազնվորեն ծառայել ժողովրդին: Նրա առաջին գործը եղավ Վանում դպրոց բացելու թույլտվություն ստանալը, որը, սակայն, մերժվեց Աղթամարի միաբանության կողմից: 1855 թ. նա դարձյալ Կ. Պոլսում էր եւ այստեղ հիմնադրում է «Արծվի Վասպուրական» հանդեսը: Սակայն նրա փայփայած նպատակը Աղթամար կղզում կրթօջախ եւ տպարան հիմնելն էր եւ այնտեղ հայ երեխաներ ուսուցանելը, ինչը հակադրում է նրան վերադառնալ Վան՝ իր հետ տանելով տպագրական երկու մեքենա, թուղթ եւ տպագրություն կազմակերպելու այլ պարագաներ: Եվ ահա 1857 թ., վանքի ողջ միաբանության հետ, Մ. Խրիմյանը երեք ամսում կառուցում է տպարան եւ դպրոցի շենք՝ բոլոր հարմարություններով: Դպրոցի տեսուչը ինքը՝ Խրիմյանն էր: Այս դպրոցում ուսանելու էին գալիս հայ երիտասարդներ Կ. Պոլսից, Պարսկաստանից, Կովկասից: Այստեղ կարճ ժամանակով դասավանդում է նաեւ Րաֆֆին, որը նաեւ թղթակցում էր «Արծվի Վասպուրականին»:

Իր սկսած գործը ավելի լայն թափով առաջ տանելու համար 1860 թ. հունվարին Մ. Խրիմյանը Վանի հոգեւոր առաջնորդ Իգնատիոս Թոքմաջյանի, Գարեգին Սրվանձտյանցի եւ այլոց հետ ուղեւորվում է Արեւելյան Հայաստան եւ Անդրկովկասի հայաբնակ վայրերը: Էջմիածնում Ամենայն հայոց կաթողիկոս Մաթեւոս Ջուխաջյանը նրան արտոնում է ազգօգուտ հանգանակություններ կատարել: Հայտնվելով Թիֆլիսում, որտեղ լավ ընդունելության է արժանանում թիֆլիսահայերի եւ Վրաստանի հայոց թեմի առաջնորդ Հասան Ջալալյանի կողմից, վարդապետը հանդիպումներ է ունենում տեղի հայ մեծահարուստների հետ, քարոզներ կարդում հայկական եկեղեցիներում: Նրա հայրենասիրական խոսքը մեծ ոգեւորություն է առաջացնում հայկական շրջաններում, նրան լսում էին հափշտակված: Ցավոք, Մ. Խրիմյանի հայրենաբուն, համարձակ ելույթները առաջ են բերում ցարական իշխանավորների եւ որոշ հոգեւորականների դժգոհությունը: Նրանք սկսում են չարամիտ զրպարտանքներ տարածել նրա մասին եւ հասնում այն բանին, որ կաթողիկոս Մ. Ջուխաջյանը պահանջում է նրա շտապ վերադարձը Էջմիածին...



1862 թ. Մ. Խրիմյանը դարձավ Տարոնի հոգեւոր առաջնորդը եւ Սբ Կարապետ վանքի վանահայրը: Նա մոտ վեց տարի վարեց այդ պաշտոնը, շրջեց Տարոնի գյուղերը, ծանոթացավ ժողովրդի վիճակին եւ այդ մասին մի քանի տեղեկագիր ուղարկեց պատրիարքարան եւ Ազգային ժողով: Տարոնում նա նույնպես հիմնեց տպարան եւ հրատարակեց «Արծվիկ Տարոնո» թերթը, որի խմբագիրը Գ. Սրվանձտյանցն էր: Ինչպես Վասպուրականում, այնպես էլ Տարոնում Մ. Խրիմյանի եւ Գ. Սրվանձտյանցի հայրենանվեր գործունեությունը ոմանք սվիններով ընդունեցին, նա նույնիսկ մեղադրվեց հակապետական գործունեության մեջ, ինչը դրդեց թուրք պաշտոնյաներին երկուսին էլ վտարել Տարոնից: 1868 թ. Խրիմյանը դարձյալ Կ. Պոլսում էր, ուր եւ հոկտեմբերին ձեռնադրվում է եպիսկոպոս: Մեկ տարի անց Ազգային ժողովը նրան ընտրեց պատրիարք: Որպես պատրիարք նրա առաջին գործերից մեկն այն եղավ, որ բոլոր ենթակա թեմերին շրջաբերականներ ուղարկեց՝ պահանջելով կրթել, դաստիարակել ժողովրդին եւ վերջ տալ երկպառակությանը: Դրանից հետո Արեւմտահայաստանի հայաշատ գավառներից դեպի պատրիարքարան սկսեց հոսել նամակների ու զեկուցագրերի իսկական մի հեղեղ, որտեղ ներկայացվում էր ժողովրդի անտանելի ծանր վիճակը, խնդրելով Հայրիկի օգնությունը: Այդ բոլոր նամակները նա կարդում էր, քննում բոլոր նյութերը եւ արդյունքները ներկայացնում Բարձր դուռ:

Սակայն դրանից արեւմտահայության տնտեսական կյանքում ոչինչ չփոխվեց: Մ. Խրիմյանը գիտակցում էր, որ իր ժողովրդի նկատմամբ Օսմանյան Թուրքիայի վարած քաղաքականության պայմաններում չեն կարող լուծվել շատ հարցեր, եւ որ ինքն անզոր է մեղմելու իր մարդկանց ցավը: Այդ պատճառով 1873 թ. նա հրաժարվեց պատրիարքական աթոռից, սակայն մնաց Կ. Պոլսում:

1877-78 թթ. բալկանյան պատերազմից հետո Կ. Պոլսի հայ ղեկավար շրջանները Բեռլինի կոնգրես ուղարկեցին ազգային պատվիրակություն՝ Մ. Խրիմյանի ղեկավարությամբ: Կոնգրեսի օրակարգում էր նաեւ Հայկական հարցը:

Սակայն պատվիրակությանը թույլ չտրվեց մասնակցել կոնգրեսի աշխատանքներին: Ավելին, պատերազմից հետո արեւմտահայությունը ապրեց ավելի ծանր օրեր: 1879 թ. երաշտին հաջորդած սովը ընդգրկեց Վասպուրականի ողջ ազգաբնակչությանը, եւ երբ Խրիմյանը նույն թվականի վերջերին դարձավ Վանի հոգեւոր առաջնորդը, անմիջապես լծվեց ժողովրդին սովից փրկելու գործին, կազմակերպեց պայքար հիվանդությունների դեմ: Այդ նպատակով նա Վան հրավիրեց բժիշկներ Հովսեփ Շիշմանյանին (Ծերենց) եւ Միհրան Վարդանյանին: Հոգեւոր կասի փոխարքա Գոլիցինը գաղտնի զեկույց է ուղարկում ցարին, թե հակառուսական շարժումները Կովկասում հովանավորում է հայոց եկեղեցին: Այդ գաղտնի զեկուցագրի պատասխանը իրեն երկար սպասել չտվեց:

1903 թ. հունիսի 12-ին ցարը ստորագրում է մի հրամանագիր, որով նախատեսվում է բռնագրավել հայ ազգային եկեղեցական գույքն ու կալվածքները: Հարվածը ամենից առաջ ուղղված էր հայկական դպրոցների դեմ, որոնց մեծ մասը գոյատեւում էր եկեղեցու նպաստներով եւ կալվածքներից ստացված եկամուտներով: Սա հայ ժողովրդի ռուսացման փորձ էր, որի հեղինակը ցարիզմն էր:

Մկրտիչ Խրիմյան - 192

Եվ ժողովուրդը նրան կոչեց ՀԱՅՐԻԿ

Եվ 84-ամյա ծերունազարդ Վեհափառը ընդդիմացավ բռնապետությանը: Նա մի շարք կոնդակներով հրամայեց Էջմիածնի Սինոդին եւ թեմական առաջնորդներին ոչ մի մասնակցություն չունենալ առգրավման գործին: Կտրականապես մերժեց հանձնել եկեղեցական գույքերը: Այնուամենայնիվ, ցարական իշխանությունները բռնագրավեցին վանքապատկան կալվածքներն ու եկեղեցական գույքը: Ոչ մի վանահայր, վարդապետ կամ եպիսկոպոս մասնակցություն չունեցավ այդ ամենին, չհանձնեց ոչ մի բանալի...

Երեւանում, Ալեքսանդրապոլում, Էջմիածնում, Ախալքալաքում կազմակերպվեցին բազմահազարանոց ցույցեր եւ միտինգներ ընդդեմ ցարի հրամանագրի, իսկ Գանձակում եւ Բաքվում տեղի ունեցան արյունալի բախումներ հայերի եւ ոստիկանության միջեւ, որի հետեւանքով եղան վիրավորներ եւ սպանվածներ: Ժամանակի ռուս առաջադեմ մտավորականները նույնպես դատապարտեցին այդ հրամանագիրը:

1905 թ. ռուսական հեղափոխական շարժումներից երկյուղած Նիկոլայ 2-րդը ստիպված էր ընկրկել: 1905 թ. օգոստոսի 1-ին նա ստորագրեց հայ եկեղեցական գույքը վերադարձնելու հրամանագիրը, որի շնորհիվ վերաբացվեցին հայկական դպրոցները:

1906 թ. օգոստոսի 15-ին Էջմիածնում գումարվեց հայ քաղաքական կուսակցությունների ընդհանուր ժողով՝ մշակելու ազգային մարտավարության խնդիրները: Երկու շաբաթ տեւեց այդ ժողովը: Ժողովի բացմանը ներկա էր նաեւ արդեն ծանր հիվանդ 86-ամյա Հայրիկը: Նա եկել էր արտասանելու իր վերջին ճառը, սակայն կարողացավ ընդամենը մի քանի բառ ասել եւ տնքալով հեռացավ երկու սպասավորների թեւերին կռթնած:

Տեսարանը ցնցող էր եւ ազդեցիկ: Խորապես հուզված այդ տեսարանից՝ ժողովի մասնակիցները կանգնեցին եւ ճանապարհեցին նրան «կեցցե Հայրիկը» բացականչություններով:

Շատ չանցած՝ նույն տարվա հոկտեմբերի 29-ին, Վեհափառը վախճանվեց, կյանքից հեռացավ Ամենայն Հայոց Հայրիկը, որի կյանքն անմնացորդ նվիրում էր հայրենիքին եւ ժողովրդին:

Ամեն տարի ապրիլի 4-ին՝ Խրիմյան Հայրիկի ծննդյան օրը, Ս. Էջմիածնի մայրավանքի բակում գտնվող գերեզմանի մոտ կատարվում է հոգեհանգստյան արարողություն: Վեհափառ հայրապետի եւ հոգեւոր բարձր դասի մասնակցությամբ: Ամենամյա ավանդական այդ արարողությանը այս տարի եւս ներկա են լինելու «Վան-Վասպուրական» հայրենակցական ՀԿ անդամները:

Արարողությունը կսկսվի ժամը 12-ին:

ՌՈՄԻԿ ՀՈՎՆԱՆՅԱՆ
«Վան-Վասպուրական» հայրենակցական հասարակական կազմակերպության նախագահ

Միջազգային գիտաժողով՝ տնտեսական ֆրանկոֆոնիայի թեմայով

«Հայաստանում ֆրանսիական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ, ԱԱԽ քարտուղար **Արթուր Բաղդասարյանը** երեկ մասնակցել է «Ընդհանուր արժեքներից դեպի ընդհանուր շահ. տնտեսական ֆրանկոֆոնիայի մարտահրավերներն ու ընձեռած հնարավորությունները» խորագրով միջազգային գիտաժողովին, որը կազմակերպել էր Հայաստանում ֆրանսիական համալսարանը:

Բացման խոսքում Արթուր Բաղդասարյանն ասել է. «Հայաստանում Ֆրանկոֆոնիայի զարգացման խնդիրները գտնվում են մեր ամենօրյա ուշադրության կենտրոնում, եւ այսօր գործնական համագործակցություն է հաստատվել Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության հետ: Կարծում եմ՝ հայ եւ ֆրանսիացի ժողովուրդների միջեւ Ֆրանկոֆոնիայի հրաշալի ավանդույթները, Հայաստանում ֆրանսիական համալսարանի գործունեությունը, որը հայ-ֆրանսիական համագործակցության փայլուն օրինակ է, կրթական, գիտական, մշակութային արդյունավետ երկխոսությունը լավ հնարավորություններ են տալիս համագործակցությունը տեղափոխել դեպի տնտեսական դաշտ»:

Արթուր Բաղդասարյանը համոզմունք է հայտնել, որ Ֆրանկոֆոնիայի շրջանակներում տնտեսական խնդիրների՝ ինչպես օրինակ փոքր եւ միջին ձեռնարեցներին հուզող խնդիրների, արտահանման հարցերի եւ տնտեսության տարբեր ճյուղերին վերաբերող հարցերի համատեղ քննարկումների միջոցով հնարավոր է աշխուժացնել կապերը եւ խթանել համագործակցությունը Ֆրանկոֆոնիայի անդամ երկրների միջեւ եւ ընդհանուր արժեքներից անցնել տնտեսական շահերի:

Գիտաժողովը կազմակերպվել էր Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության Գլխավոր քարտուղար Աբդու Դիուֆի բարձր հովանու ներքո եւ նպատակ ուներ համալսարանական, գործարար շրջանակներին իրազեկել տնտեսական ֆրանկոֆոնիայի գաղափարի եւ դրա բազմաթիվ՝ նորարարական, մարդկային ու սոցիալական դրսեւորումների մասին, ինչպես նաեւ բացահայտել Ֆրանկոֆոնիայի անդամ երկրների միջեւ ներդրումներն ու փոխանակումները դյուրացնող միջոցները: Գիտաժողովին մասնակցում էին Հայաստանում Ֆրանսիայի արտակարգ եւ լիազոր դեսպան Անրի Ռենոն, պետական այրեր, ինչպես նաեւ դիվանագիտական կորպուսի այլ ներկայացուցիչներ:

Ադրբեջանը «պահանջատե՞ր» է

«Ադրբեջանի՝ Հայաստանի հանդեպ բոլոր պահանջները հենվում են ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի չորս բանաձեւերի վրա»,- սա քաղաքագետ եւ Միլլի մեջլիսի միջազգային հարաբերությունների եւ միջխորհրդարանական կապերի հանձնաժողովի անդամ **Ռասիմ Մուսաբեկովի** արձագանքն է ՀՀ փոխարտգործնախարար **Շավարշ Քոչարյանի** դիտարկմանը, թե «Բաքուն եւ Անկարան փորձում են միակողմանի զիջումներ պարտադրել»:

Պարզվում է՝ բանակցություններում Ադրբեջանը հանդես է գալիս որպես «պահանջատե՞ր»: Համենայն դեպս, կարծում ենք, որ Մուսաբեկովի խոսքում «պահանջներ» ձեւակերպումը պատահական չէ: Մանավանդ որ նա նաեւ ասում է, որ Ադրբեջանը «Մինսկի խմբից չի հրաժարվում, բայց պահանջելու իրավունք ունի»: Ստացվում է, որ Մինսկի խումբն Ադրբեջանում ընկալվում է որպես «պատժիչ մահակ», որը «պետք է հայկական կողմերին պարտադրի, որպեսզի ընդունեն Բաքվի պահանջները եւ կատարեն»:

Մենք արդեն առիթ ունեցել ենք մեկնաբանելու, որ ՄԱԿ-ի ԱԽ չորս բանաձեւերից եւ ոչ մեկը Հայաստանին որեւէ պահանջ չի ներկայացնում: Մինսկի խումբը ձեւավորվել է ՄԱԿ-ի հովանավորությամբ: Ուստի ինքն էլ իրավասու չէ պահանջ ներկայացնելու, քանի որ նրա մանդատը միայն միջնորդական է:

Զարմանալի է, որ լինելով նույն Մինսկի խմբի անդամ, Ադրբեջանն անցած 20 տարիներին այդպես էլ չի հասկացել, որ միջազգային, միջպետական, նաեւ՝ Լեռնային Ղարաբաղի հետ հարաբերություններում «պահանջներ» ասվածը տեղի ունենալ չի կարող: Դիվանագիտությունը եւ «պահանջատիրությունը» պարզապես անհամատեղելի են:

Մուսաբեկովը, մինչդեռ, շարունակում է Մինսկի խմբից «պահանջել, որ միջնորդական ջանքերը բերեին ինչ-որ արդյունքների»: Ասվածը կարելի է հասկանալ այն իմաստով նաեւ, թե Ադրբեջանն ակնկալում է, որ Մինսկի խումբը պարտադրեր, որպեսզի Իլհամ Ալիեւը Կազանի հանդիպմանն անսպասելիորեն «շուրջ մեկ տասնյակ նոր առաջարկություններ չաներ»: Այդ դեպքում, թերեւս, Ռուսաստանի նախագահի միջնորդությունը «կբերեր ինչ-որ արդյունքների», եւ բանակցային գործընթացը տեղատույտի չէր մատնվի: Չէ՞ որ հատկապես նրա մասին են միջնորդներն ասել, որ «Կազանում հեռընթաց է տվել»:

Գուցե Մուսաբեկովը դժգո՞հ է Իլհամ Ալիեւից: Բայց ինչո՞ւ է դա փորձում քողարկել Մինսկի խմբի հասցեին անհիմն կշտամբանքով: Իրականում Ադրբեջանը սպասում է ինչ-որ հրաշքի, երբ միջազգային միջնորդները Լեռնային Ղարաբաղում «կստեղծեն Պոլյանիչկոյի կազմկոմիտեն եւ զենքի ուժով կվերահաստատեն սահմանադրական կարգը»:

Ցավալի է, որ այդպես է: Մյուս կողմից էլ, սակայն, Բաքվում ինչքան շատախոսում, այնքան բացահայտվում են որպես ոչ ադեկվատ իշխանություն: Պետք է հուսալ, որ Մինսկի խումբն ու հատկապես համանախագահ երկրներն Ադրբեջանի այդ կեցվածքը կգնահատեն ըստ արժանվույն:

Չարենցի «Ես իմ անուշ Հայաստանի» բանաստեղծությունը BBC-ով

Էդինբուրգի «Շոտլանդական բանաստեղծության գրադարանը» մշակել է «Գրավոր աշխարհը» ընդհանուր խորագրով բանաստեղծությունների հեռարձակման մի ծրագիր, որի շրջանակներում այս տարվա մարտից մինչեւ սեպտեմբեր ամիսը ներկայացվելու են օլիմպիական խաղերին մասնակից 204 ազգությունների մեկական բանաստեղծությունները: Հայկական բանաստեղծություններից ընտրվել է մեծանուն Եղիշե Չարենցի «Ես իմ անուշ Հայաստանի» ոտանավորը՝ Դայանա Տեր-Հովհաննիսյանի թարգմանությամբ, որը առաջին անգամ հրատարակվել է 1977-ին Կոլումբիա համալսարանի «Տրանսլեյշն մագազին» պարբերականում, իսկ այնուհետեւ նաեւ «Հայ բանաստեղծությունների ժողովածու» նույն համալսարանի հրատարակած ծաղկաքաղում:

Բանաստեղծությունները BBC-ով ներկայացվելու են անգլերեն ու բնագիր լեզուներով, տեղեկացնում է «Արմինյն միրոր սփեքթեյթր» շաբաթաթերթի մարտի 3-ի համարը:

Հ. Ծ.

Մ. ԵԱՇԱՆԳԵԵՐ

Բուշ ավագը կոչ արեց միասնական թեկնածու դարձնել Ռոմնիին

ԱՄՆ նախկին նախագահ Ջորջ Բուշ ավագը երեկ հանրապետականներին պատշաճաբար կոչ է արել դադարեցնել ներկուսակցական մրցավազքը եւ Մասաչուսետսի նախկին նահանգապետ Միթ Ռոմնիին դարձնել Հանրապետական կուսակցությունից ԱՄՆ նախագահության միասնական թեկնածու: Այդ մասին հաղորդում է Ֆրանսիայի գործակալությունը:

Հյուսիսային Կարոլինայում կազմակերպված պատշաճական միջոցառման ժամանակ Բուշը հայտարարել է, որ «կուսակցության համար եկել է նահանգապետ Ռոմնիի շուրջը համախմբվելու ժամանակը»: «Մենք բոլորս շատ վաղուց ճանաչում ենք Միթին, եւ նա այն մարդն է, որը կկատարի իր աշխատանքը եւ կհաղթի ընտրություններում», նշել է նախկին նախագահը:

Բուշ ավագից բացի, վերջին օրերին Ռոմնիին պատշաճություն են հայտնել մի քանի ազդեցիկ հանրապետականներ, մասնավորապես Ֆլորիդայի նախկին նահանգապետ Ջեբ Բուշը (Բուշի որդին) եւ նույն նահանգի սենատոր Մարկո Ռուբիոն:

Ներկայումս Ռոմնին հանրապետական թեկնածուների մեջ առաջատար է: Նա արդեն ստացել է 565 պատվիրակի ձայն՝ իր գլխավոր մրցակից Ռիկ Սանտորումի 256-ի դիմաց: Ներկուսակցական մրցավազքում հաղթելու համար թեկնածուն պարտավոր է ստանալ 1144 պատվիրակի ձայն:

Կատաղի մարտեր Աֆղանստանի արեւմուտքում

Աֆղանստանի արեւմուտքում կատաղի մարտեր են ծավալվել կառավարական բանակի եւ թալիբների միջեւ: ԻՏԱՌ-ՏԱՍՍ գործակալության տվյալներով, ամեն ինչ սկսվել է անցյալ օրը Գուլիստան գավառում աֆղանական բանակի ավտոշարասյան վրա «Թալիբան» շարժման գրոհայինների կատարած հարձակումից: Պատշաճական տվյալների համաձայն, հարձակման ժամանակ սպանվել է 3 զինվոր, մինչդեռ «Թալիբանի» ներկայացուցիչները խոսում են առնվազն 40 զինվորի ու սպայի սպանության մասին: Միջազգային կոալիցիոն ուժերը աֆղանական բանակի հետ համատեղ հարձակումներ են սկսել թալիբների դեմ: Իշխանությունները հաղորդում են, որ մարտերի ընթացքում սպանվել են 30 եւ վիրավորվել 15 թալիբներ: Կատաղի մարտերը շարունակվում են:

Հունգարիայի նախագահին զրկեցին գիտական աստիճանից

Ջեմմելվայսի համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ Հունգարիայի նախագահ Պալ Շմիտտը զրկվել է գիտական աստիճանից: Այդ մասին հաղորդում է Ասոշիեյթեդ պրես գործակալությունը:

Համալսարանի ռեկտոր Տիվադար Տուլասսայը պարզաբանել է, որ Շմիտտի դոկտորական թեզը գիտական աշխատության մասնագիտական եւ էթիկական չափանիշներին անհարիր է ճանաչվել: Շմիտտին գիտական աստիճանից զրկելու օգտին քվեարկել են գիտական խորհրդի 33, դեմ՝ 4 անդամներ:

Պալ Շմիտտը 1992-ին «Ժամանակակից օլիմպիական խաղերի ծրագրի վերլուծություն» թեմայով դոկտորային թեզը պաշտպանել էր Հունգարիայի ֆիզկուլտուրայի ինստիտուտում, որը հետագայում մտել էր Ջեմմելվայսի համալսարանի կազմի մեջ: 2012-ի հունվարին հունգարական HGV հանդեսը Շմիտտի թեզը վերլուծելով եզրակացրել էր, որ այն պարունակում է բուլղար գիտնական Նիկոլայ Գեորգիեւի աշխատության անփոփոխ հատվածներ:

Ստուգման նպատակով ստեղծվել էր հատուկ հանձնաժողով 4 պրոֆեսորի եւ 1 իրավաբանի մասնակցությամբ: Մարտի 29-ին հրապարակած հաշվետվության մեջ հանձնաժողովը նշում է, որ Շմիտտի 215-էջանոց թեզի մեջ ավելի քան 200 էջ կազմում են ուրիշ աշխատությունների «ուղղակի թարգմանությունը» կամ «մասնակի փոխառությունը»:

Երկրի ընդդիմադիր կուսակցությունների ներկայացուցիչները գրագողության փաստերի հաստատումից հետո նախագահին կոչ են արել թողնել պաշտոնը: Սակայն Պալ Շմիտտը առայժմ չի ուզում հրաժարական տալ:

Պալ Շմիտտը 1968 եւ 1972 թվականներին դարձել է սուսերամարտի օլիմպիական չեմպիոն: 1983-1988թթ. նա զբաղեցրել է Հունգարիայի Ազգային օլիմպիական կոմիտեի գլխավոր քարտուղարի պաշտոնը, իսկ 1990-ին դարձել է դրա նախագահը: Շմիտտը նաեւ դիվանագետ է, Հունգարիայի դեսպանն է եղել Իսպանիայում եւ Շվեյցարիայում: 2009-2010 թթ. եղել է Եվրոխորհրդարանի պատգամավոր: 2010-ին 5 տարով ընտրվել է Հունգարիայի նախագահի պաշտոնում:

Պ. Ք.

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Արամ Հայկազ՝ «Աղուոր գիրք մը»

«Արամ Հայկազ. Մոռացուած էջեր» գրքի երկրորդ հատորին գրականագետ Մարգարիտ Խաչատրյանը երկար սպասել չտվեց: Նախորդ՝ առաջին հատորից տպավորված ընթերցողները սպասում եւ միաժամանակ չէին կասկածում, որ Արամ Հայկազին եւ նրա ստեղծագործություններին սիրահարված գրականագետը մոտ մեկ տարվա ընթացքում կվազվզի տարբեր արխիվներ, կոլեղի գրադարաններ անկյունները, Արամ Հայկազի ժառանգների գրադարակները, կթերթատի մամուլը՝ բարեխիղճ աշխատանք ներկայացնելու համար:

Հատորում ընդգրկված են Արամ Հայկազի գրչին պատկանող տասը տարվա (1951-1960) գրական նյութերը՝ աշխատասիրողի կողմից լրակազմված եւ ծանոթագրված: Ժամանակագրական կարգով ներկայացված պատմվածքները, հոդվածները, գրախոսություններն ու հրապարակախոսական բնույթի նյութերը առաջին անգամ են մեկ ժողովածուի մեջ համահավաք կերպով ներկայացվում:

Ժողովածուն բացվում է Մ. Խաչատրյանի «Կազմողի կողմից» խոսքով, որում հեղինակն իր երախտագիտության խօսքն է հղում ՀՀ վարչապետ Տ. Սարգսյանին՝ երկրորդ հատորի հրատարակությանն աջակցելու համար: Ջեն անտեսված նաեւ այն անձինք, որոնք իրենց ներդումն ունեն ժողովածուն անթերի ներկայացնելու գործում:

Կազմողի խոսքին հաջորդում է Արամ Հայկազի ամերիկաբնակ դստեր՝ Այրիս Հայկազ Ջեֆենյանի խոսքը՝ արտասանված հորը նվիրված հոբելյանական հանդիսության ժամանակ: Անկեղծ եւ հետաքրքրական բանախոսության միջոցով ընթերցողը ծանոթանում է Արամ Հայկազին որպէս սովորական մարդու եւ ընտանիքի հոգատար հոր: Այրիսը երախտագիտորեն նշում է, որ բախտավորություն է իր համար նման հարկի տակ ծնվելը եւ Արամ Հայկազի նման հոգատար հայր եւ ընտանեկան արվեստագետ, կյանքի ուսուցիչ ունենալը: Հրանտ Մարգարյանի թարգմանությամբ զետեղված այս հատվածը Արամ Հայկազի անառարկելի եւ հավատի կենսագրականն է:

«Արամ Հայկազ. Մոռացուած էջեր» գրքի Բ հատորն ընդգրկում է տարբեր ժանրի նյութեր՝ գրախոսականներ, նամակներ, ակնարկներ, պատվածքներ, ճառեր, հոբելյանական առիթներով ասված բանախոսություններ: Իր հույզերի ու մտորումների մեջ Արամ Հայկազն այս անգամ եւս անկեղծ եւ անմիջական է: Օրինակ՝ Խաչիկ Դաշտենցի «Խոդեդան»ով տպավորված՝ գրում է. «Աղուոր գիրք մը: Այնքա՜ն աղուոր, որ անոր ընթերցումը հազիւ աւարտած, կը նստիմ ու գրիչս ձեռք կառնեմ՝ հրճուանքս ուրիշներու հետ ալ բաժնելու համար»: Նման անմիջականությունը եւ տարաբուխ գնահատականը գամում են ընթերցողին՝ խորանալու հեղինակի հաջորդ էջերում, ապա եւ ներկայացված ստեղծագործության՝ տվյալ դեպքում «Խոդեդան»ի ընթերցանությանը անպայման ձեռնամուխ լինելու: Հեղինակի նման վերաբերմունքի շնորհիվ հետաքրքրություն եւ անմիջապես ընթերցելու պարտավորություն են առաջացնում Վ. Մինախորյանի «1915 թուականը», Համաստեղի «Սպիտակ ձիաւորը», Վ. Թոթովենցի «Կեանքը հին հռովմեական ճանապարհի վրա» եւ շատ ու շատ այլ ստեղծագործութիւններ: Հետաքրքրությամբ են ընթերցվում հայոց լեզվի, գրաբարի եւ աշխարհաբարի հիմնահարցերին, եկեղեցական տոներին, գեղարվեստական կտավներին ու հայտնի նկարիչներին նվիրված լուսաբանումները:

Ժողովածուում տեղ են գտել Արսեն Երկաթի, Խոսրով Ներսիսեանի եւ այլոց մի շարք վերլուծականներ: Ինչպես միշտ, որպես հարազատ եւ անջնջելի թեմա՝ Արամ Հայկազը անդրադառնում է Շաքին Գարահիսարի հերոսամարտին:

«Արամ Հայկազ. Մոռացված էջեր» ժողովածուի երկրորդ հատորը՝ որպէս ոգու կորովն ու արիութիւնը չկորցրած հայի կենսասիրության, քրիստոնեական լավատեսության գեղարվեստական վերարտադրություն իր հիմնավոր տեղն ունի գրականագետ Մարգարիտ Խաչատրյանի արդեն հրատարակած գրքերի կողքին եւ, ինչպէս Արամ Հայկազը կասեր, «աղուոր գիրք մըն է»՝ հետաքրքրական եւ բովանդակալից:

ՀԱՅԿԱՆՈՒՇ ՄԵՍԲՈՊԵԱՆ
բանաս. գիտութ. թեկնածու, դոցենտ

«Վան նախագծի» երաժիշտները հանդես կգան հաշվետու համերգով

2010 թվականից «Երկիր» միությունն իրականացնում է հայկական բարձրավանդակի ոչ նյութական մշակութային ժառանգության ուսումնասիրության «Վան նախագիծ» ծրագիրը:

Նախագծի շրջանակներում երաժիշտ Նորայր Քարտաշյանի ղեկավարությամբ ձեւավորվել է «Վան նախագիծ» երաժիշտների խումբը, որի նպատակն է հայկական ավանդական նվագարանների ու երաժշտական ժառանգության պահպանումը, ուսումնասիրությունն ու տարածումը:

«Երկիր» միությունից տեղեկացնում, որ սույն տարվա ապրիլի 2-ին Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի թատրոնում կայանալու է «Վան նախագիծ» երաժիշտների խմբի հաշվետու համերգը: Կհնչեն արեւմտահայկական ժողովրդական ստեղծագործություններ՝ նորովի մշակմամբ ու գործիքավորմամբ:

Ի. Պ.

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանը ապրիլի 2-3-ը կանցկացնի միջազգային գիտաժողով՝ նվիրված օտար լեզուների դասավանդման խնդիրներին:

Այն կանցկացվի Հայաստանում Ֆրանկոֆոնիայի օրերի շրջանակում

Գիտաժողովի բացմանը կմասնակցի եւ ելույթ կունենա Հայաստանի արտաքին գործերի նախարար **Էդվարդ Նալբանդյանը**:

Ներկա կլինեն ՀՀ-ում Ֆրանսիայի արտակարգ եւ լիազոր դեսպան **Անրի Ռեյմոնը**, ինչպես նաեւ ֆրանկոֆոն մյուս երկրների դեսպանները:

Միջոցառումը կազմակերպել է ՀՊՄՀ-ի Օտար լեզուների ֆակուլտետը:

Գիտաժողովը կմեկնարկի Հայկական Պետական Մանկավարժական Համալսարանում /Տիգրան Մեծի պող. 17 հասցեում, 3-րդ հարկ, գիտաժողովների դահլիճում/ ժամը 10.00-ին: Ձեր մասնակցությունը ցանկալի է:

Մանրամասների համար զանգահարեք ՀՊՄՀ լրատվության եւ հանրության հետ կապերի վարչություն. ***Հեռ՝ 597 000****:*

Երաժշտությունն իմ կյանքն է, ասում է դաշնակահար Արուս Աճեմյանը

Հայ թատրոնի անվանի ռեժիսոր Վարդան Աճեմյանի ծոռնուհին, կոմպոզիտոր Ալեքսանդր Աճեմյանի թոռնուհին եւ կոմպոզիտոր Վարդան Աճեմյանի դուստրը՝ Արուսը դեռ մանկուց հետաքրքրվել է դասական երաժշտությամբ: Արուսը հինգ տարեկանից սկսել է զբաղվել արվեստով եւ հետագայում ուսանել պրոֆեսոր, ՀՀ վաստակավոր արտիստ Ռոզա Թանդիլյանի դասարանում: Այնուհետեւ հենց նրա հոգատարության ներքո ավարտել երաժշտական դպրոցը, կոնսերվատորիան, ասպիրանտուրան: Արուս Աճեմյանին բախտը ժպտաց եւ նա 10-11 տարեկանում հաղթող ճանաչվեց մի քանի երաժշտական մրցույթներում ու վերջնականապես ընտրեց դաշնակահարի մասնագիտությունը: Տարիները գլորվում էին ու Արուսի հաղթանակները մեծանում, շատանում: 2000 թ. Արուս Աճեմյանը պարգեւատրվեց Առնո Բաբաջանյանի անվան երիտասարդ դաշնակահարների մրցույթի առաջին եւ հատուկ մրցանակներով: 2001-ին նա հանդես է եկել Վլադիմիր Սպիվակովի «Մոսկվյան վիրտուոզների» հետ եւ հրաշալի կատարել է Մոցարտի թիվ 20 դաշնամուրի կոնցերտը: Նույն տարին Արուսը մասնակցել է Քոլմարի փառատոնին (Ֆրանսիա), Օսֆորդի 3-րդ միջազգային փառատոնին (Միացյալ Թագավորություն): Այնուհետեւ համերգների շարքը հաջորդել են՝ Հարավային Ամերիկայում (Մոնտեվիդեո, Պորտո Ալեգրե, Սան Պաուլո, Ռիո դե Ժանեյրո, Ռիբեյրու Պրետո), ՌԴ-ում , Բեյրութում, Սան Ֆրանցիսկոյում, Լոս Անջելեսում, Կանադայում, Գերմանիայում եւ այլուր: 2007-ին Արուս Աճեմյանը համերգաշարերը շարունակեց Չինաստանով մեկ՝ ՀՀ մշակույթի նախարարության հովանու ներքո կազմակերպված «Հայաստանի օրեր Չինաստանում» ծրագրի շրջանակներում: Արուս Աճեմյանի համար արժեքավոր է 2009-ին հանրապետության նախագահի մրցանակին արժանանալը: Արուս Աճեմյանի համերգացանկը ընդգրկում է հայ, եվրոպական, ռուս եւ խորհրդային կոմպոզիտորների ստեղծագործություններ: Նշեմ նաեւ, որ 2010-ին Շվեյցարիայում Արուս Աճեմյանը հանդես է եկել մենահամերգով, որի ընթացքում առաջին անգամ ներկայացրել է իր հոր՝ Վարդան Աճեմյանի «Արկած» ստեղծագործությունը եւ արժանացել բարձր գնահատականի:

Իր հաջողությունների համար Արուսը **«Ազգի»** հետ զրույցում ասաց, որ երախտապարտ է իր ուսուցիչներին, հանձինս Ռոզա Թանդիլյանի, Դանիել Փոլաքի, Նիկոլայ Պետրովի, Միխայիլ Վոսկրեսենսկու, Մենահեմ Փրեսլերին եւ այլոց, որոնց մոտ վարպետության դասընթացներ է ստացել:

Արուս Աճեմյանը մարտի 29-ին Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի պետական ակադեմիական թատրոնում, օպերայի սիմֆոնիկ նվագախմբի հետ, ղեկավարությամբ մաեստրո Կարեն Դուրգարյանի, հրաշալի մենահամերգ տվեց՝ նվագելով Ռախմանինովի ստեղծագործությունները: Համերգից առաջ ներկաները մեկ րոպե լռությամբ եւ հոտնկայս հարգեցին անվանի կոմպոզիտոր Ալեքսանդր Հարությունյանի հիշատակը:

Համերգից հետո **«Ազգը»** ստացած տպավորությունները կիսեց մի քանի երաժշտագետների հետ, որոնք պնդեցին՝ «Արուսին հիանալի վերելք է սպասում, նա վիրտուոզ դաշնակահար է ու անկրկնելի...»:

«Ազգի» այն հարցին, թե երաժշտությունն ի՞նչ տեղ ունի իր կյանքում, Արուս Աճեմյանն ասաց. «Երաժշտությունն իմ կյանքն է, իմ ապրելակերպը, առանց որի կյանքը չեմ պատկերացնում: Արվեստի նվիրյալի համար երաժշտությունը միշտ իր զավակն է»: Ի դեպ, Արուսը ամիսներ անց կմայրանա ու իր ամեն համերգի մի հատվածը հոգու խորքում նվիրում է իր առաջնեկին: Իսկ թե զգո՞ւմ է արդյոք տարբերություն հայ եւ արտասահմանյան ունկնդիրների միջեւ, ասաց. «Իհարկե, մեր ունկնդիրը շատ խստապահանջ է, քանի որ ես իմ առաջին քայլերը արել եմ հենց հայ ունկնդրի ներկայությամբ եւ նա ամեն անգամ ինձանից նոր սպասելիքներ ունի, ինչը շատ կարեւոր է: Հուզումը, իհարկե, միշտ կա, անկախ նրանից, թե որ բեմում եմ նվագում: Դա մի քանի րոպե է տեւում, իսկ հետո ես ընկղմվում եմ երաժշտության մեջ ամբողջովին, որն էլ իմ կյանքն է...»:

Այո, ոչ միայն Արուսն է իր հրաշալի կատարումով տարվում երաժշտությամբ, այլեւ ունկնդրին էլ իր հետ տանում է ու պարգեւում հրաշալի ժամեր: Առաջիկայում Արուս Աճեմյանը հանդես կգա ՀՖՆ-ի հետ, այնուհետեւ կլինեն մենահամերգներ՝ նվիրված հայ կոմպոզիտորներին:

Արուսի կատարումից գոհ էր նաեւ մաեստրո **Կարեն Դուրգարյանը** եւ **«Ազգի»** հետ զրույցում ասաց. «Ես վաղուց գիտեմ Արուսին եւ շատ ուրախ եմ, որ նույն ժամանակահատվածում ենք ապրում, աշխատում: Շատ տաղանդավոր աղջիկ է: Միակ խնդիրը որ ունի, մի քիչ շատ է հուզվում առաջին րոպեներին, որը բնորոշ է արտիստներին: Հույս ունեմ, որ նրան շատ այլ բեմերում էլի կտեսնեմ, քանի որ նման դաշնակահարներ շատ քիչ ունենք եւ ես կարծում եմ՝ պետք է մի փառատոն անենք, որտեղ կընդգրկենք դաշնակահարներին: Ես ուրախ եմ, որ համերգը շատ լավ ընթացավ եւ ջերմ ընդունելություն գտավ», ասաց մաեստրո Դուրգարյանը ու շտապեց ղեկավարելու համերգի երկրորդ բաժինը՝ «Ալեկո» ներկայացումը:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

Որմնանկար՝ նվիրված Միսաք Մանուշյանի եւ իր խմբի հիշատակին

Քարիզի Միսաք Մանուշյանի անունը կրող փողոցից ոչ հեռու, քաղաքի 20-րդ թաղամասում 8-հարկանի շենքի պատի 200 քմ մակերեսին վերջերս ստեղծված որմնանկարը նվիրված է Երկրորդ աշխարհամարտի տարիներին ֆրանսիական դիմադրության շարժման ակտիվ մասնակից Միսաք Մանուշյանի եւ նրա համախոհների հիշատակին:

Շենքի սեփականատերերի խորհրդի այս հղացումը հաստատվել է թաղապետարանի, թաղային եւ գեղարվեստական խորհուրդների նյութական եւ բարոյական աջակցությամբ: Որմնանկարի բացումը կատարվել է օրեր առաջ. այս մասին տեղեկացնում է Քարիզի «Նոր Յառաջը»: Արարողությանը ներկա են եղել պատգամավորներ, քաղաքապետարանից եւ տարբեր միություններից ներկայացուցիչներ, որմնանկարի հեղինակը՝ ծագումով ռուս արվեստագետ Ա. Պոպովը: Բացման խոսքով հանդես է եկել թաղապետուհին:

Մեծ եղեռնի նահատակ ծնողների զավակ Մ. Մանուշյանը Ֆրանսիա տեղափոխվել է 1925 թ.: Եղել է Ֆրանսիայի Կոմկուսի անդամ, հասարակական-մշակութային լայն գործունեություն է ծավալել, լույս է ընծայել «Զանք» գրական-գեղարվեստական հանդեսը, խմբագրել «Զանգու» շաբաթաթերթը, գրել է նաեւ բանաստեղծություններ: Երկրորդ աշխարհամարտի տարիներին մասնակցել է դիմադրության շարժման պայքարին, դրա ղեկավարներից է եղել, 1943-ին նշանակվել է «Ստալինգրադ» ջոկատի հրամանատար, ապա՝ Քարիզի շրջանում գործող պարտիզանական, ինտերնացիոնալ ջոկատների հրամանատար: Ձերբակալվել, 1944-ին մահապատիժ 22 ընկերների հետ գնդակահարվել է: Նրա ծառայությունները բարձր է գնահատել ֆրանսիական կառավարությունը՝ հետմահու պարգեւատրելով «Պատվո լեգեոն» շքանշանով, իր պատվին փողոցներ են անվանակոչվել Քարիզում, Մարսելում, Առնուվիլ լե Գոնեսում, Գարդանում: Քարիզում տեղադրվել է հուշարձան, Մարսելում եւ Երեւանում նույնպես: Մահից 3 տարի անց Քարիզում լույս է տեսել նրա բանաստեղծությունների ժողովածուն, վերահրատարակվել է Երեւանում:

Մ. Ք.

Կալիֆոռնիայի հայ գրողների միութիւն

ԿՀԳՄ առաջիկայ գրական ժողովը կկայանայ 2012 ապրիլի 5-ին, երեկոյեան ժամի 5-6-ը ընդունելութիւն, ընկերային ժամ. ապա 6-8-ը ազատ բեմ, Մեծ Եղեռնի, կամ հայրենասիրութեան բնանիւթերով սեփական ստեղծագործութիւնների հեղինակային ընթերցումներ: Ելոյթ ունենալու ցանկութիւն ունեցող հեղինակները նախապէս պիտի հերթագրուեն ժողովի նախագահութեան մօտ: Գրական ժողովը կկայանայ Գլենդէյլի Հանրային գրադարանում. Glendale Public Library, 222 East Harvard Street, Glendale CA 91205. Մուտքը ազատ է գրասէր հասարակութեան համար:

Մեծ Եղեռնի 97-րդ տարելիցի կապակցութեամբ կիրակի, ապրիլի 22-ին, երեկոյեան ժամի 5-7-ը, կկատարուի Ծաղկամատոյց, Գլենդէյլի Սբ Աստուածածին եկեղեցու «ՂՕՂԱՆՋ ՈԳԵԿՈՉՄԱՆ» խաչքարին. St. Mary's Church, 500 South Central Ave, Glendale CA 91204. գրողները կընթերցեն հայոց ցեղասպանութեանը մարտիրոսուած գրողների ստեղծագործութիւնները, կհնչեցնեն նրանց անմահ խօսքը. նահատակների յիշատակին ծաղիկ կմատուցեն խաչքարին:

ԿՀԳՄ

Արթուր Աբրահամը Եվրոպայի չեմպիոնի տիտղոսի պաշտպանությունը կիրականացնի

Այսօր Գերմանիայի Կիլ քաղաքում 2-րդ միջին քաշային կարգում WBO-ի վարկածով Եվրոպայի չեմպիոն Արթուր Աբրահամն իր տիտղոսի առաջին պաշտպանությունը կիրականացնի՝ մենամարտելով 33-ամյա լեհ բռնցքամարտիկ Պյոտր Վիլչեւսկու հետ: Սա ընթացիկ մրցաշրջանում Արթուր Աբրահամի 2-րդ մենամարտը կլինի: Առաջինը կայացել է այս տարվա հունվարի 14-ին գերմանական Օֆենբուրգ քաղաքում արգենտինացի Պաբլո Ֆարիասի հետ: Այդ մենամարտում Արթուրը 5-րդ ռաունդում նոկաուտի ենթարկեց մրցակցին ու արժանացավ WBO-ի վարկածով 2-րդ միջին քաշային կարգում Եվրոպայի չեմպիոնի տիտղոսին:

Այսօրվա մենամարտը պրոֆեսիոնալ ռինգում Արթուրի համար կլինի 37-րդը: Աբրահամը դրանցից 33-ն ավարտել է իր օգտին՝ կրելով ընդամենը 3 պարտություն: Լեհ բռնցքամարտիկը պրոֆեսիոնալ ռինգում 32 մենամարտ է անցկացրել: 30-ում նա հաղթել է, կրել է 2 պարտություն:

Նախապատրաստվելով մենամարտին, Արթուր Աբրահամն օրերս բաց մարզում է անցկացրել, որին ներկա են գտնվել մեծ թվով մարզասերներ: Ավանդույթի համաձայն մենամարտին նախորդել է մամուլի ասուլիսը:

«Չեմ ցանկանում թերագնահատել մրցակցիս, սակայն կարծում եմ, որ կհաղթեմ: 2,5 ամիս լրջորեն նախապատրաստվել եմ այս մենամարտին, շաբաթական 4 մարզումային մենամարտ եմ անցկացրել: Այս ընթացքում մարզչիս հետ ուսումնասիրել ենք մրցակցիս՝ դիտելով նրա անցկացրած մենամարտերի տեսագրությունները: Դա կօգնի ինձ օգտագործելու մրցակցիս թույլ կողմերը՝ մենամարտի մարտավարությունն ընտրելիս: Նախատեսում եմ հարձակողական մարտաոճ ընտրել: Իմ նպատակը Վիլչեւսկուն հաղթելն է, որից հետո արդեն լրջորեն պետք է մտածեմ աշխարհի չեմպիոնի տիտղոսի համար մենամարտելու մասին», ասել է **Արթուր Աբրահամը**:

«Թեեւ գործադուլի պատճառով ստիպված էի ողջ օրն անցկացնել Մյունխենի օդանավակայանում, սակայն դա ինձ հունից չի հանել ու շաբաթ օրը ես կհաղթեմ Աբրահամին: Ամեն անգամ ռինգ դուրս գալիս, ցանկանում եմ հաղթել: Իմ կարծիքով, այս մենամարտում Արթուրի վրա հոգեբանական ճնշումը մեծ է: Չէ՞ որ, եթե նա պարտվի, ամեն ինչ կկորցնի: Իմ պարագայում կորցնելու ոչինչ չունեմ, քանի որ այս մենամարտում ֆավորիտ են համարում Արթուր Աբրահամին», ասել է **Պյոտր Վիլչեւսկին**:

Առաջիկա մենամարտի վերաբերյալ իր կարծիքն է արտահայտել նաեւ Արթուր Աբրահամի պրոմոութեր **Կալե Զաուեռլանդը**. «Եթե Արթուրը հաղթի, նա WBO-ի դասակարգման ցուցակում շատ բարձր տեղ կզբաղեցնի: Այդ դեպքում հնարավոր է, որ նա մենամարտի Շտիգլից-Գրոուվս մրցախաղի հաղթողի հետ: Այս մենամարտը շատ կարեւոր է Արթուրի համար: Նա պարտավոր է հաղթել Վիլչեւսկուն»:

Աբրահամի մարզիչ **Ուլի Վեգները** եւս հույս ունի, որ իր սանը կհաղթի. «Վիլչեւսկին բազմապրոֆիլ բռնցքամարտիկ է: Նա ավելի բարձրակարգ բռնցքամարտիկ է, քան Ֆարիասը: Վստահ եմ, որ բռնցքամարտի սիրահարները Կիլում հետաքրքրական մենամարտի ականատես կդառնան»:

Ի դեպ, բուքմեյքերներն էլ նախապատվությունը տալիս են հայ բռնցքամարտիկին: Աբրահամի հաղթանակը գնահատվում է 1,19 գործակցով, Վիլչեւսկու հաջողության համար խաղադրույքներ են ընդունվում 4,2 գործակցով: Ոչ-ոքին գնահատվում է 27 գործակցով: Բուքմեյքերների կարծիքով Աբրահամի հաղթանակն ամենահավանականն է 8-10-րդ ռաունդներում, որի գործակիցը 11 է: Միավորներով Աբրահամի հաղթանակը գնահատվում է 2,55 գործակցով, Վիլչեւսկունը՝ 5,5:

Խաղադաշտերը կրկին պատրաստ չեն

Այսօր «Իմպուլս»-«Միկա» եւ «Բանանց»-«Փյունիկ» հանդիպումներով կմեկնարկի ֆուտբոլի Հայաստանի բարձրագույն խմբի առաջնությունը: Մրցաշարի մեկնարկը պետք է տրվեր դեռեւս նախորդ շաբաթ, սակայն խաղադաշտերի խոտածածկի վատորակության պատճառով 1-ին տուրը հետաձգվեց: Սակայն ինչպես պարզվեց, այժմ էլ մարզադաշտերի տնօրենները չցանկանալով փչացնել խաղադաշտերի խոտածածկը, հրաժարվել են թիմերին մրցասպարեզ տրամադրել: Դրա հետեւանքով 3 հանդիպումների մրցավայրը կրկին փոփոխվել է:

«Իմպուլս»-«Միկա» հանդիպումը Արարատի «Այգ» մարզադաշտի փոխարեն կկայանա «Միկայի» մարզադաշտում: Փաստորեն այդ խաղում «Միկան» սեփական հարկի տակ հանդես է գալու հյուրի կարգավիճակով: Ընդ որում այդ հանդիպումը կսկսվի նախատեսվածից մեկ ժամ ուշ՝ ժամը 16-ին, քանի որ մինչ այդ մարզադաշտում իր մարզումն է անցկացնելու ֆուտբոլի Հայաստանի կանանց հավաքականը:

Ապրիլի 1-ին կայանալիք հանդիպումների մրցավայրերն էլ փոխվել են: «Ուլիսը» «Հանրապետականի» փոխարեն ստիպված կլինի «Գանձասարին» հյուրընկալել Իջեւանի «Արնար» մարզադաշտում, իսկ «Արարատ»-«Շիրակ» հանդիպումն Աբովյանից տեղափոխվել է Ոսկեհատ: Փաստորեն միայն «Բանանցի» մարզադաշտն է (չհաշված «Միկան») այսօր պատրաստ առաջնությանը:

Խաղադաշտերի խնդիրը միշտ էլ հրատապ է եղել Հայաստանում: Այս տարի առաջնությունը տեւելու է մինչեւ դեկտեմբերի սկիզբը, այնպես որ վերջնագծում էլ կրկին մրցավայրերը փոփոխելու կարիք հատաս կզգացվի: Նույնը կարելի է ասել նաեւ հաջորդ տարվա մարտի սկզբների խաղերի մասին, երբ կվերսկսվի առաջնությունը: Օրինական հարց է ծագում. եթե խաղադաշտերը պատրաստ չէին լինելու նաեւ այժմ, ապա ինչո՞ւ հետաձգվեց առաջնության առաջին տուրը:

Կլիչկոյի օլիմպիական մեդալը վաճառվեց 1 մլն դոլարով

1996-ի Ատլանտայի օլիմպիական խաղերում Վլադիմիր Կլիչկոյի նվաճած ոսկե մեդալը Կլիչկո եղբայրների հիմնադրամի կազմակերպած աճուրդում վաճառվեց 1 մլն դոլարով: Հետաքրքրականն այն է, որ գործարքը կնքելուց հետո գնորդը մեդալը վերադարձրեց Կլիչկոյին՝ ցանկություն հայտնելով, որպեսզի օլիմպիական պարգեւը մնա նրանց ընտանիքում: Կլիչկոն շատ էր հուզվել այդ արարքից եւ Ուկրաինայի բոլոր երեխաների անունից իր երախտագիտությունը հայտնեց:

Բարեգործական այդ աճուրդից ընդհանուր առմամբ 1,5 մլն դոլար ստացվեց:

ՄԱՐՄՆԱՄԱՐԶՈՒԹՅՈՒՆ

Վահագն Դավթյանն արժանացավ արծաթե մեդալի

Դոհայում ընթացող սպորտային մարմնամարզության աշխարհի գավաթի խաղարկությունում վստահ հանդես եկավ 23-ամյա Վահագն Դավթյանը, որն օղակների վրա վարժությունում վաստակելով 15,55 միավոր, արժանացավ արծաթե մեդալի: Այս մարզաձեւում Հայաստանի մյուս պատվիրակը՝ Արթուր Թովմասյանը 15,275 միավորով զբաղեցրեց 4-րդ տեղը:

Նժույգաթափերի վարժությունում մրցանակակիր դառնալուն մոտ էր 19-ամյա Արթուր Դավթյանը: Նրան ընդամենը 0,05 միավոր չբավականացրեց բրոնզե մեդալ նվաճելու համար: Օլիմպիական խաղերի ուղեգիր ունեցող Արթուրը 14,575 միավորով գրավեց 4-րդ տեղը: Հույս կա, որ Արթուր Դավթյանը մեդալ կնվաճի հենացատկերում: Նա այս մրցաձեւի Եվրոպայի երիտասարդների չեմպիոնն է:

Չեմպիոնության համար պայքարը սրվում է

Շախմատի Եվրոպայի առաջնության 9-րդ տուրում ուշադրության կենտրոնում էր Վլադիմիր Հակոբյանի եւ Վլադիմիր Մալախովի մրցավեճը: Առաջատարները հաշտություն կնքեցին՝ վաստակելով 7-ական միավոր: Իր օգտին կես միավոր գրանցեց նաեւ մյուս առաջատար Մախիմ Մաշլակովը՝ հաշտություն կնքելով Նիկիտա Վիտյուգովի հետ: Դա հնարավորություն տվեց եւս 4 շախմատիստների՝ Լաուրենտ Ֆրեսինետին, Էռնեստ Ինարկիեւին, Միխայիլ Կոբալիային եւ Դմիտրի Անդրեյկինին միանալու առաջատար եռյակին շնորհիվ մրցակիցների նկատմամբ տոնած հաղթանակի: Չեմպիոնի տիտղոսի համար բավականին թեժ պայքար է ընթանում, որի ելքը կվճռեն ավարտական 2 տուրերի մրցախաղերը: Հակոբյանը 10-րդ տուրում սեւերով մրցելու է ֆրանսիացի գրոսմայստեր Լաուրենտ Ֆրեսինետի հետ:

Հայ շախմատիստներից 6-ական միավոր են վաստակել Սերգեյ Մովսիսյանը, Գաբրիել Սարգսյանն ու Տիգրան Պետրոսյանը: Նշված եռյակից 9-րդ տուրում հաղթեց միայն Պետրոսյանը՝ առավելության հասնելով Պետեր Պրոխազկայի նկատմամբ: Մովսիսյանն ու Սարգսյանը հաշտություն կնքեցին համապատասխանաբար Իվան Սարիչի եւ Եվգենի Նայդերի հետ:

5,5-ական միավոր ունեն Հրանտ Մելքումյանն ու Զավեն Անդրեասյանը: Հրանտը խաղում է փոփոխակի հաջողությամբ: Նախորդ տուրում տոնած հաղթանակից հետո Մելքումյանը պարտվեց ռուսաստանցի Ալեքսեյ Դրեեւին: Իսկ Զավենը 2-րդ անընդմեջ հաղթանակը տոնեց՝ պարտության մատնելով Եվգեն Նիլս Գրանդելիուսին:

Ռոբերտ Հովհաննիսյանն ու Սամվել Տեր-Սահակյանն ունեն 5-ական միավոր: Սամվելը հաղթեց հույն Նիկոլաոս Կալոդուլոսին, իսկ Ռոբերտը ոչ-ոքի խաղաց չեռնոգորցի Նիկոլա Դյուկիչի հետ: Արման Փաշիկյանն ու Հովհաննես Գաբուզյանը վաստակել են 4,5-ական միավոր: Փաշիկյանը հաղթեց բոսնիացի Ժասմին Բեյթովիչին, իսկ Գաբուզյանը պարտվեց ռումինացի Վլադիսլավ Նեւեդնիչնուն: Հայ շախմատիստներից ամենացածր արդյունքն (2,5 միավոր) ունեցող Վլադիմիր Պողոսյանը 2-րդ անընդմեջ պարտությունը կրեց իսրայելցի Օֆիր Ահարոնի հետ պարտիայում:

Հայ թենիսիստները զրկվեցին 3-րդ խմբի ուղեգրից

Դորտմունդում ընթացող սեղանի թենիսի աշխարհի թիմային առաջնությունում Հայաստանի տղամարդկանց հավաքականը 1-3 հաշվով պարտվեց մարոկկացիներին ու զրկվեց 3-րդ խմբի ուղեգրի համար պայքարից: Մեր թիմից միակ հաղթանակը տոնեց Մեսրոպ Ղուկասյանը՝ 3-0 հաշվով պարտության մատնելով Ահմեդ Զեգլին:

Այժմ հայ թենիսիստները 81-84-րդ տեղերի համար պայքարում կմրցեն մակեդոնացիների հետ: Վերջիններս 0-3 հաշվով զիջել էին ուզբեկներին: Այս զույգի հաղթողը 81-82-րդ տեղերը կվիճարկի Պերու-Բահրեյն երկյակի հաղթողի հետ: Հայաստանի կանանց հավաքականը 3-րդ խմբում 61-68-րդ տեղերի համար պայքարում 3-2 հաշվով հաղթեց Շրի Լանկայի թենիսիստուհիներին: Այժմ մեր հավաքականը 61-64-րդ տեղերի համար պայքարում կմրցի Գվատեմալայի հետ, որը 3-1 հաշվով հաղթել է մեքսիկացիներին:

Ռաուլը բարելավեց ռեկորդային իր ցուցանիշը

Ֆուտբոլի Եվրոպայի լիգայի քառորդ եզրափակիչ առաջին հանդիպումներն անցան դաշտի տերերի առավելությամբ: 4 խաղերից 3-ում նրանք հաղթեցին միեւնույն 2-1 հաշվով: Լիսաբոնում «Սպորտինգը» հաղթեց «Մետալիստին», «Ատլետիկոն» առավելության հասավ «Հաննովերի» նկատմամբ, իսկ «Ալկմարը» պարտության մատնեց «Վալենսիային»:

Հյուրերից հաջողությունն ուղեկցեց միայն իսպանական «Ատլետիկին», որը Հելզենկիրհենում 4-2 հաշվով հաղթեց «Շալկե-04»-ին: Այդ խաղում Ռաուլի խփած 2 գոլերի շնորհիվ «Շալկե-04»-ը 2-1 հաշվով առջեւից էր ընթանում: Սակայն հետագայում հյուրերը 3 գոլ խփելով՝ հաղթեցին: Ռաուլը եվրոգավաթներում խփած գոլերի թիվը հասցրեց 75-ի, ինչը ռեկորդային ցուցանիշ է: 70-ական գոլ են խփել Ֆիլիպո Ինձագին եւ Հերդ Մյուլլերը:

Էջը պատրաստեց ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՄՐՑՈՒՅԹ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՆԱԽԱՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Մրցույթի ծածկագիրը՝ ՀՀՄՆՄԾԻԳԾՋԲ-01

Պատվիրատու՝ ՀՀ մշակույթի նախարարության «Մշակութային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ն հայտարարում է մրցույթ «Մշակութային հաստատությունների էլեկտրոնային տոմսերի ավտոմատացված վաճառքի համակարգի ստեղծման, ներդրման եւ շահագործման ծառայությունների ձեռքբերման» նպատակով:

Թերթում մրցույթի հայտարարությունը տպագրելուց հետո 10-օրյա ժամկետում մրցույթին մասնակցել ցանկացողները կարող են դիմել մրցույթի փաթեթը ստանալու եւ այլ մանրամասների ծանոթանալու համար :

Հասցե՝ ք.Երեւան,Կառավարական 3-րդ շենք, ՀՀ մշակույթի նախարարության «Մշակութային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ, հեռախոս՝ 56-84-08, 58-51-96:

«Քաղաքակրթությունների երկխոսություն»

ազգային կենտրոն ՀԿ
2011թ. ֆինանսական հաշվետվություն

Մնացորդ 01.01.2011թ.	- 811դր.
Նվիրատվություններ	
Մուտքեր	- 599000դր.
Ծախսերը	
Սոց. վճար	- 122780դր.
Աշխատավարձ	- 375820դր.
Այլ ծախսեր	
Թերթեր	- 100300
Մնացորդ 31.12.2011թ	- 911դր.

«Քաղաքակրթությունների երկխոսություն» ազգային կենտրոն ՀԿ խորհրդի նախագահ Սամ Սարգսյան

www.azg.am

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

30 մարտի 2012 թ.
Հիմնադրամի 2011 թ. գործունեության մասին

1. Հիմնադրամի լրիվ անվանումը՝ Հայաստանում Տուրիզմի Զարգացման Հիմնադրամ:
2. Հիմնադրամը գրանցված է ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից 2004 թ. ապրիլի 30-ին (գրանցման թիվ՝ 222.160.00313, վկայական՝ 03Ա064892, թիվ 002.2 փոփոխությունը գրանցվել է ՀՀ իրավաբանական անձանց Պետական ռեգիստրի կենտրոնական մարմին կողմից 19.11.2009 թ.):
3. Հիմնադրամի գտնվելու վայրը՝ ք. Երեւան, Վ. Սարգսյան 26/3, հեռ. 58-06-69, 54-85-22:
4. Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամները եւ գործադիր տնօրենը չեն օգտվել Հիմնադրամի միջոցներից:
5. Հիմնադրամի ֆինանսները առաջացել են հիմնադրամի սեփականություն հանդիսացող հիմնական միջոցների օտարումից:
6. Իրականացված ծրագրերը՝
- Հիմնադրամին պատկանող Ստեփանավանի «Լոռի-Բերդ» տուրիստական հանգրվանում տարվա ընթացքում իրենց հանգիստն են անցկացրել շուրջ 250 զբոսաշրջիկներ, որի արդյունքում ստացված մաքուր օգուտը կազմել է 1,8 մլն դրամ:
- Տարվա ընթացքում հիմնադրամին պատկանող ավտոմեքենաների շահագործումից ու զբոսաշրջիկների համար կազմակերված էքսկուրսիաների եւ միջոցառումների անցկացումից հիմնադրամը ստացել է շուրջ 7,4 մլն դրամի եկամուտ:
- հիմնադրամի «Նարիր» հյուրանոցի աջ մասում, որտեղ հիմնականում բնակվում են 90 փախստական ընտանիքներ, տարվա ընթացքում կատարվել է շինվերանորոգման աշխատանքներ, որի համար ծախսվել է 10,26 մլն դրամ:
7. Վարչականավարչական ծախսերը կազմել են 10 400 հազար դրամ:
8. Հիմնադրամի 2011թ. հաշվետվության աուդիտը անց է կացրել «Էկոնոմիկս Աուդիտ» ՍՊԸ (29.02.12թ., նո. 9, լիցենզիա թիվ ԱԾ 085):

Հաստատված է հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 2012 թ. մարտի 27-ին կայացած նիստի կողմից:

Հիմնադրամի տնօրեն Ֆ. Սիմոնյան
Գլխ. հաշվապահ Ա. Խաչատրյան

«Թիվի ալիք» ՍՊԸ 2011 թ. գործունեության մասին

հազ. դրամ

Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների իրացումից հասույթ (համախառն եկամուտ) ընդամենը	118124.0
այդ թվում՝	
-թերթերի իրացումից	108555.0
-գովազդից	9569.0
Նվիրատվություն	0
Շահութահարկ	4074.0

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը գիտահետազոտական աշխատանքներ կատարելու հմտություններ եւ հակվածություն ունեցող երիտասարդ տնտեսագետներ (որոշակի ժամկետով կնքվող աշխատանքային պայմանագրով) հավաքագրելու նպատակով հայտարարում է արտաքին մրցույթ:

Աշխատանքի նպատակն է. Միկրոտնտեսական եւ մակրոտնտեսական մակարդակներում գիտահետազոտական աշխատանքների իրականացում:

Աշխատատեղի հիմնական պարտականություններն են.

Առաջադրված թեմայով գիտահետազոտական ավարտուն աշխատանքի իրականացում, որը ներառում է.

▼ Մակրոտնտեսական եւ միկրոտնտեսական հետազոտությունների եւ գործնական վերլուծությունների իրականացում՝ կիրառելով ժամանակակից հավանականային եւ վիճակագրական մեթոդներ, ընդհանուր եւ մասնակի հավասարակշռության մոդելների կառուցման սկզբունքներ եւ հաշվողական ծրագրային փաթեթներ:

▼ Տնտեսագիտական տարբեր թեմաներով գիտահետազոտական աշխատանքների գործնական կիրառության միջազգային փորձի ուսումնասիրում եւ ամփոփում;

Պահանջվող կրթությունը եւ գիտելիքների շրջանակը.

Բարձրագույն տնտեսագիտական կրթություն: Բակալավրիատ եվ մագիստրատուրայի ավարտական կուրսի ուսանողները նույնպես կարող են դիմել մրցույթին:

Աշխատանքային փորձ չի պահանջվում:

Գիտելիքներ հետեւյալ ոլորտներում՝ մակրոտնտեսագիտություն, միկրոտնտեսագիտություն, մաթեմատիկական մոդելներ տնտեսագիտության մեջ, էկոնոմետրիկա եւ հավանականային մեթոդների կիրառումը տնտեսագիտության մեջ: **(Գիտելիքների սուղումն իրականացվելու է համաձայն ԿԲ կայքի «Թափուր աշխատատեղեր» բաժնում տեղադրված հարցաշարի):**

Լեզուների իմացություն՝ հայերեն, ռուսերեն եւ անգլերեն լեզուների իմացություն (ռուսերեն եւ անգլերեն լեզուները՝ մասնագիտական գրականություն ընթերցելու նպատակով):

Անհրաժեշտ հմտություններ՝ համակարգչով աշխատելու հմտություն (MS Office, վիճակագրական ծրագրեր):

Փաստաթղթերի ընդունելության վերջնաժամկետը՝ 2012թ. ապրիլի 16-ը ներառյալ:

Պահանջվող փաստաթղթերը.

▼ Դիմումի ձեւ (Ձեւը զետեղված է ՀՀ կենտրոնական բանկի էլեկտրոնային կայքում - www.cba.am «Թափուր աշխատատեղեր» բաժնում կամ տրվում է ՀՀ կենտրոնական բանկում):

▼ Հետազոտական/վերլուծական աշխատանքներ (առկայության դեպքում)

Դիմումի ձեւը եւ հետազոտական/վերլուծական աշխատանքները կարող են ներկայացվել էլեկտրոնային տարբերակով՝ hrm@cba.am հասցեով:

Մրցութային հարցաշարը եւ Կենտրոնական բանկում մրցույթների անցկացման վերաբերյալ տեղեկատվությունը զետեղված է Կենտրոնական բանկի էլեկտրոնային կայքում (**www.cba.am**) կամ տրվում է Կենտրոնական բանկում: Պարզաբանումների համար կարող եք զանգահարել՝ 59-26-34 եւ 26-13 (ներքին):

Հասարակայնության հետ կապերի ծառայություն

«Էկոնոմիկա եւ Իրավունք» ամսագիր

Ինչպես անթերի վարել հաշվապահությունը եւ խուսափել հաշվապահական, հարկային եւ իրավաբանական սխալներից

▼ Օրենսդրական նորություններ - Պարզաբանումներ - Խորհրդատվություն

▼ «Էկոնոմիկա եւ Իրավունք» - ամսագիր ղեկավարների եւ մասնագետների համար

Բաժանորդագրվելու համար զանգահարեք 54-24-81, 54-74-81

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԸ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱՁՄԱԿԵՐՊՈՂ ՈՒ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՆԵՐՔՈՀԻՇՅԱԼ ԳՈՒՅՔԵՐԻ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴ

Հ/հ	Գույքի հասցեն (գտնվելու վայրը)	Գույքի օգտագործման նպատակը	Հողամասի մակերեսը (քմ)	Շինության մակերեսը (քմ)	Մեկնարկային գինը (դրամ)
1	Բաշինջաղյան փող.հ.185/1	կաթսայատուն	321.07	270	10,500,000
2	Միկոյան փող., 15/2	կաթսայատուն	311.24	282	11,550,000
3	Գալշոյան 19/1	կաթսայատուն	159.96	137	9,525,000
4	Սաֆարյան 16/4 կաթսայատուն	կաթսայատուն	306.25	288	15,260,000
5	Աթոյան անց., հ11/2	կաթսայատուն	436	436	19,350,000
6	Խաղաղ Դոնի 12/8	կաթսայատուն	163.8	164	8,250,000
7	Ճառագայթային փող., 136/1	կաթսայատուն	316.25	283	17,025,000
8	Իսակովի պող., 52/27	կաթսայատուն	158.76	159	6,600,000
9	Շահվերդյան 18, ԿՋՀ 31	կաթսայատուն	254.27	237	19,950,000
10	Շիրակի 56	կաթսայատուն	255.38	229	6,075,000
11	Վիլնյուսի փող.,67/2	կաթսայատուն	242.5	213	6,300,000
12	Կաթսայատուն, Արծրունու փող. 16/2	կաթսայատուն	138	116	6,450,000
13	Նոր-Նորք 8-րդ մ/շ 17/4	կաթսայատուն	241.25	210	7,650,000
14	Դավիթաշեն 3-րդ թաղ.ԿՋՀ հ.2	Կաթսայատուն	713.2	636	21,000,000
15	Գաջեգործների 74/2	կաթսայատուն	125.05	125	4,220,000
16	Դավիթաշեն 3-րդ թաղ.ԿՋՀ հ.1	Կաթսայատուն	322.5	285	11,000,000
17	Հալաբյան 27շ. 75 տարածք	ոչ բնակելի տարածք		57	4,200,000
18	Զաֆյան փողոց 1շենք 38 տարածք	ոչ բնակելի տարածք		58	12,070,000
19	Քաջազնունու փողոց 11 շենք 111 շին.	ոչ բնակելի տարածք		351	17,500,000
20	Քոչար 9	ոչ բնակելի տարածք		231	38,200,000
21	Քոչար 9	ոչ բնակելի տարածք		199	32,000,000
22	Քոչար 9	ոչ բնակելի տարածք		60	10,000,000
23	Կողբացի 2ա 93 ոչ բն. Տարածք	ոչ բնակելի տարածք		24	1,770,000
24	Ագաթանգեղոսի 29 շենքի տարածք	ոչ բնակելի տարածք		16	11,700,000
25	Սարյան 2 48 տար.	ոչ բնակելի տարածք		6	260,000
26	Սարյան 2 47 տար.	ոչ բնակելի տարածք		26	2,760,000
27	Արգախի 28/2	ոչ բնակելի տարածք	62.3	44	2,200,000

Աճուրդին կարող են մասնակցել այն իրավաբանական և ֆիզիկական անձինք, որոնք Երեւան համայնքի նկատմամբ օրենքով սահմանված կարգով ֆինանսական պարտավորություններ չունեն:

Աճուրդին մասնակցել ցանկացող անձինք աճուրդի կազմակերպման եւ անցկացման ընթացակարգին կարող են ծանոթանալ Երեւանի քաղաքապետարանում, ինչպես նաեւ Երեւանի քաղաքապետարանի ինտերնետային կայքում՝ WWW.YEREVAN.AM:

Աճուրդի պայմանների մանրամասներին, պայմանագրի տիպային օրինակին ծանոթանալու ու հայտ ներկայացնելու համար դիմել Երեւանի քաղաքապետարան (Արգիշտիի 1, մուտքը աշտարակի կողմից, 2-րդ հարկ, հեռ. 514173):

Աճուրդին մասնակցել ցանկացողները հայտին կից ներկայացնում են տեղական վճարի՝ 10000 դրամ եւ մեկնարկային գնի 5%-ի չափով նախավճարի վճարման անդորրագրերը:

Աճուրդը կայանալու է 2012թ ապրիլի 17-ին ժ.16.00-ին, ք. Երեւան, Արգիշտիի 1 հասցեում:

Հայտերն ընդունվում են աշխատանքային օրերին՝ մինչեւ 2012թ ապրիլի 17-ը, ժամը 14.00-ն:

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԸ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱՁՄԱԿԵՐՊՈՂ ՈՒ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը հայտարարում է արտաքին մրցույթ «Տնտեսական հետազոտությունների վարչության տնտեսագետ» թափուր երեք աշխատատեղերի համալրման համար:

Աշխատանքի նպատակն է. Միկրոտնտեսական եւ մակրոտնտեսական մակարդակներում գիտահետազոտական աշխատանքների իրականացում:

Աշխատատեղերի հիմնական պարտականություններն են.

Առաջադրված թեմայով գիտահետազոտական ավարտուն աշխատանքի իրականացում, որը ներառում է.

▼ Մակրոտնտեսական եւ միկրոտնտեսական հետազոտությունների եւ գործնական վերլուծությունների իրականացում՝ կիրառելով ժամանակակից հավանականային եւ վիճակագրական մեթոդներ, ընդհանուր եւ մասնակի հավասարակշռության մոդելների կառուցման սկզբունքներ եւ հաշվողական ծրագրային փաթեթներ:

▼ Տնտեսագիտական տարբեր թեմաներով գիտահետազոտական աշխատանքների գործնական կիրառության միջազգային փորձի ուսումնասիրում եւ ամփոփում;

▼ Հետազոտական աշխատանքների եւ վերլուծությունների ներկայացում սեմինարներում եւ կոնֆերանսներում:

Պահանջվող կրթությունը եւ գիտելիքների շրջանակը.

Բարձրագույն տնտեսագիտական կրթություն

1 տարվա աշխատանքային փորձ Կենտրոնական բանկում կամ 2 տարվա աշխատանքային փորձ ոչ Կենտրոնական բանկում (հետազոտական ոլորտում (ներառյալ արտասահմանյան ԲՈՒՀ-երում մագիստրոսի կոչում ստացած դիմորդներ ուսումնառության տարիները)):

Գիտելիքներ հետեւյալ ոլորտներում՝ մակրոտնտեսագիտություն (միջանկյալ), միկրոտնտեսագիտություն (միջանկյալ), դրամավարկային տեսություն (միջանկյալ), մաթեմատիկական մոդելներ տնտեսագիտության մեջ (միջանկյալ), էկոնոմետրիկա եւ հավանականային մեթոդների կիրառումը տնտեսագիտության մեջ (միջանկյալ), տնտեսական վիճակագրություն (միջանկյալ): (Գիտելիքների սուղումն իրականացվելու է համաձայն ԿԲ կայքի Թափուր աշխատատեղերե բաժնում տեղադրված հարցաշարի):

Լեզուների իմացություն՝ հայերեն, ռուսերեն եւ անգլերեն լեզուների իմացություն (ռուսերեն եւ անգլերեն լեզուները՝ մասնագիտական գրականություն ընթերցելու նպատակով):

Անհրաժեշտ հմտություններ՝ համակարգչով աշխատելու հմտություն (MS Office, վիճակագրական ծրագրեր):

Փաստաթղթերի ընդունելության վերջնաժամկետը՝ 2012թ. ապրիլի 16–ը ներառյալ:

Պահանջվող փաստաթղթերը.

▼ Դիմումի ձեւ (Ձեւը զետեղված է ՀՀ կենտրոնական բանկի էլեկտրոնային կայքում - **www.cba.am** «Թափուր աշխատատեղեր» բաժնում կամ տրվում է ՀՀ կենտրոնական բանկում):

▼ Հետազոտական/վերլուծական աշխատանքներ (առկայության դեպքում)

Դիմումի ձեւը եւ հետազոտական/վերլուծական աշխատանքները կարող են ներկայացվել էլեկտրոնային տարբերակով՝ hrm@cba.am հասցեով:

Մրցութային հարցաշարը եւ Կենտրոնական բանկում մրցույթների անցկացման վերաբերյալ տեղեկատվությունը զետեղված է Կենտրոնական բանկի էլեկտրոնային կայքում (www.cba.am) կամ տրվում է Կենտրոնական բանկում: Պարզաբանումների համար կարող եք զանգահարել՝ 59-26-34 եւ 26-13 (ներքին):

Հասարակայնության հետ կապերի ծառայություն

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունեությունն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետության 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրված՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիսեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրված է տպագրության՝ 30.3.2012, գինը՝ 100 դրամ, տպագրում է «Նոյեան Տաղան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: